

ՌԻՕԼԹԸՐ ՍԿՐԻՒ

Թ Ա Լ Ի Ս Մ Ա Ն



ՀՐԱՏՈՐԻԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐԱՆԱՇԱՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԿԱՆՈՒՄԻՏԵ

Ս. ՄԱՅՈՒՆ, 1917.
ՏՈՒՐԱՆՈՒ ԵՐԵՎԱՆ

ՈՒՕԼԹԸՐ ՍԿՕԹ



ԿՆՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՐԵՐ

Ինձած է Էօթնպուրկ ֆաղափին մէջ 1771-ին եւ մինած՝ 1832-ին:
Նիհար ու քուշակազմ տղայ մըն էր, եւ անմահ Գօթրէի նման,
ու ոք կը հուսար թէ ան պիտի մեծնար:

Վաստառը ըշշաշուն պատճառով, շատ անկանոն կերպով կը յա-
ճախէր վարժարան: Սակայն որովհետեւ չափազանց ջանաւոր էր,
նոյնիսկ անկողնին մէջ եխանդ պատկած, միշտ եւ կրկին ու կրկին
անգամ կը կարդար իր հայրենիքի — Սկովսիոյ հին առասպելները,
հեքիաթներն ու գրոյցները: Հայրենի հողը, իր վիպական եւ խորհր-
դաւոր ծովեզներսնորուն պէս, հարուստ էր հերոսական ու արկածալից
աւանդուքիւններով: Ասոնց կրկնակ ընթերցումները իրեն ուրախու-
թիւն եւ շիտկումն աւերիկ զատ, երազուն հոգին կը շեցնէին մոլորաւոր
պաշտամունքով մը դեպի իր հայրենի արթազուն հողը:

Երբ չափահաս դարձաւ եւ համեմատաբար շատ անելի կագ-
դուրած եւ առողջ, սկսաւ սիրելի ու յարգելի իր հայրենակիցներուն
կողմէն: Մանկական շրջանի ընթերցումները այնքան խոր էին դրօշ-
մած իր մօտին մէջ, որ զիմիք հանդարտ չէին ձգեր: Եւ զեղեցիկ օր
մը, գրիչը ձեռնն առաւ, եւ գրեց իր առաջին իմիջնորոյն պատմածքը:
Ասոր հետեւեցաւ իր հիւնց երկար դիւցազներգութիւններու աննման
վիպերու շարքը: Այնպիսի արտակարգ յարողութիւն մը ունեցան իր
գրածները, որ իրաւամբ սկսան ըսել թէ՛ — «նուօրբը Սկօթը Սկով-
սիան ստեղծեց» — Հաիւր տարի առաջ գրեթէ անձամբ երկիր մըն
էր Սկովսիան, նոյնիսկ Ա՛զգիացիներուն համար: Եւ երբ այսօր աշ-
խարհի ամեն կողմերէն այցելուներ կ'երթան, եւ այդ գեղանի երկիրը
անելի լաւ ձմեռեցած ու սիրած է, ասոնց մէկ պատճառը Սկովսիայի
Մեծ զաւկին — Ուօրբը Սկօթի — շնորհն է: Գեղեցիկ ծառայութիւն:

Թ Ա Լ Ի Ս Մ Ա Ն

Ա. Ա Ս Պ Ե Տ Շ

Եօթը հարիւր տարի առաջ, օր մը, գեղեցիկ և երիտասարդ զրահակիր ասպետ մը, պատերազմական ուժեղ նժոյգ մը հեծած, Պաղեստինի այրող արևին տակ, դանդաղօրէն կը յառաջանար Մեռեալ ծովու եզերքն ի վեր: Սաստիկ նեղած էր տաքէն և նոյնչափ ալ յոգնած: Եւ իր անտանիկ կացութիւնը գոնէ պահ մը մոռնալու համար, կը խորհէր այն աղջկան մասին, զոր ինքը կը սիրէր: Ասիկա էտիթ Գեղանի իշխանուհին էր, Անգլիոյ թագաւորին հօրեղբօր աղջիկը, Առիւծասիրտ Ռիչարտին, որու դրօշակին տակ ասպետը, (*) սրբ Քրննէի՛ր կը պատերազմէր այն օտեն:

Այս ժամանակները շատ մը կուիւններ կը մղւէին Պաղեստինի մէջ: Քրիստոնեայ խաչակիրները, ինչպէս որ արդէն գիտէք, իրենց թուր ու ժովր կը կռւէին Սուրբ Երկիրը մահմետականներու և անոնց հռչակաւոր պետին, Սուլթան Սէլահէտտինի ձեռքէն ետ առնելու համար:

Այն ժամանակամիջոցին, երբ այս անցուղարձը կը պատահէր, կարճ զինադադար մը ընդհատեր էր պատերազմը: Որովհետև Առիւծասիրտ Ռիչարտը, որ սովորաբար խաչակիրներու բանակին հրամանատարն էր,

(*) Անգլիոյ մէջ այս մակդիրը կուսան ասպետներու եւ ազնուականներու:

ծանր տենդէ մը կը տառապէր : Միւս քրիստոնէայ իշխանները , ինչպէս՝ Ֆիլիպպ-Սկիւսի՝ ֆրանսայի թագաւորը , Աւստրիոյ դուքս Լէօփոլտը , և կարգ մը ուրիշներ , անընդունակ ըլլալով առանց Ռիչարտի օգնութեան Սուլթանին դէմ յաջողութեամբ մաքառիլ , կ'ուզէին մահմետական պետին հետ համաձայնութիւն մը կնքել , բարեպաշտ ճգնաւորի մը միջնորդութեամբ , որ էնկաստիի մէջ քարայր մը կ'ապրէր , և զոր շատ լաւ կը ճանչնար Սուլթանը : Ուստի այս սուրբ մարդուն գրութիւն մը զրկեցին , և այս բանը վատահեցան Սըր Քլէնէթին :

Սըր Քլէնէթի մասին շատ բան չը գիտէին , միայն այնքան , թէ ան Սկոտլանդի սասպետ մըն էր , որ իրեն հետ գունդ մը մարդիկ էր բերեր , և որ բոլորն ալ կուրեներուն մէջ մեռած էին , իր վահանակիրէն զատ , որ ներկայիս հիւանդ էր : Գիտէին , թէ ան չափազանց աղքատ էր , բայց և շատ կտրիճ և հպարտ , նմանապէս , թէ ան սրսի շուն մը ունէր , Ռուզվէլ անունով , զորս շատ կը սիրէր : Թերևս նաև մէկ քանիները գիտնային , թէ ան կը սիրէր Լէյտիոն*) Էտիթը , և թէ վերջինս ալ զինքը . բայց , եթէ մաքերէն կ'անցնէին իսկ , բնաւ չէին խօսիր այս մասին : Որովհետև այսպիսի սէր մը դժբաղդ բան մըն էր Քլէնէթի նման աղքատ սասպետի մը համար , որ կը համարձուկէր սիրել այնքան բարձր ծագումով աղջիկ մը , աստիճանով երկրորդը ամբողջ Անգլիոյ մէջ Պէրանթէր թագուհիէն յետոյ , որ Ռիչարտի կինն էր :

Մինչդեռ բանակին մէջ այս խօսքերը կ'ըլլային , սըր Քլէնէթը ճամբան շարունակելով՝ նշմարեց Էմիրի մը , մահմետականներու գլխաւորի մը , ետեւէն երեւալր : Եւ որովհետեւ երկուքն ալ իրարու թշնամի բանակներու կը

(*) Անգլիոյ մէջ լէյտի կ'ըսեն ազնուական ծագումով կիներու :



պատկանէին, ուստի և նոյն պահին կուի բռնեցան: Խաչակիր ասպետը պաշտպանւած էր հաստ զրահով մը, մինչդեռ էմիրը անզրահ և թեթեւ հագւած, առանց ձիէն վար իջնալու ճարպիկ շարժումներով կը դառնար անոր շուրջը, անդադար նետեր արձակելով, յուսալով զոնէ մէկը հանդիպցնել մարմնի անզրահ մասին: Վայրկեան մը այնպէս կարծեց, թէ իր նետերէն մէկը զրահը ծակելով՝ Խաչակիրի մարմնին մէջ խրեցաւ, որովհետեւ սրը Քրննէթը ինկաւ ձիէն, էմիրը իսկոյն իր ձիէն վար իջնելով, երբ կը ծռէր իր ինկած թշնամուն վրայ, զայն բոլորովին լինցնելու, յանկարծ երկու ուժեղ բազուկներու մէջ սեղմելն զգաց, հասկնալով թէ խորամանկութեան մը զո՞ գացած էր ինքը: Բայց և այնպէս յաջողեցաւ կենդանի ճողոպրիլ, ձգելով իր գօտին ու հազուստներէն մաս մը: Սակայն թշնամու ձեռքն էր ձգիր իր սուրն ու նետերը, ուստի և այլեւս չէր կրնար կուիլ: Այս պատճառով Խաչակիրին քով վերադառնալով ըսաւ անոր. — «Քանի որ մեր երկու ազգերուն միջեւ զինսօդադար մը կայ այս վայրկեանիս, մինք ալ մեր միջեւ հաշտութիւն կը կնքենք:» —

— «Սիրայօժար» — պատասխանեց սըր Քրննէթը: Եւ երկու թշնամիները քով քովի շարունակեցին իրենց ճամբան մինչեւ ակունք մը, որու վճիտ և պաղ ջուրը, պղպղակներ կազմելով գետնէն կը բղխէր, խումբ մը արմաւենիներու տակ: — «Բնիկները» — ըսաւ էմիրը, — «այս ակունքը անապատի աղամանդը կ'անուանեն» —

Երկու ձիաւորները վար իջան, խնամեցին իրենց նժոյգները, գովարար ջրէն խմեցին, և նախաճաշելէ յետոյ, յիչ մը պառկեցան, արմաւենիներու ստւերին տակ, հանգչելու համար:

էմիրը իր ընկերոջ հաճոյք պատճառելու նպատակով, զանազան սիրուն բաներ պատմեց իր երկրի վրա-

յով, Յետոյ, հրր քաւակաւնին կազդուրուած զգաց՝
ճամբան շարունակելու համար, սրր Քրննէթը տեղէն
եյաւ, նժոյգին թամբը գարկաւ և ըսաւ Էմիրին, թէ
ինքը Թէոդորիկ սուրբ ճգնաւորը տեսնելու պիտի եր-
թար:

— «Այդ պարագային, ես այ ձեզի հետ կուգամ,
որպէս զի ողջ առողջ տեղ հասնիլ կարողանաք» — ըսաւ
Էմիրը, — «որովհետեւ ես ճամբան գիտեմ, և որ չա-
փազանց վտանգաւոր է» — :

Ուստի ճամբան երկու քով շարունակեցին, և շատ
չանցած մտան քարքարուտ և մենաւոր անապատ մը:
Փիշիրը կը մօտիկնար, սրր Քրննէթի սիրտը աւելի ու
աւելի կը սեղմէր՝ ազգւած շրջակայքի ամայի և մն-
ւելական տխրութենէն: Մինչդեռ Էմիրը հակառակը, կը
իննդար և պատերազմական երգեր կ'երգէր, ցոյց տալ
ուզելով, թէ ինքը բնաւ բանէ մը չէր վախնար:

Յանկարծ, մէկը շատ բարձր և շատ թարակ, միմի-
այն գազանի մը մորթովը ծածկուած, ծառացաւ Էմիրին
դէմ դիմաց, և զայն իր նժոյգէն վար քաշելով՝
սկսաւ կատաղութեամբ ձեծել, Բնական է, որ սրր
Քրննէթը իսկոյն վար ցատկելով՝ իր նոր բարեկամին
օգնութեան փութաց, և իր ուժեղ բազուկներուն շնոր-
հիւ յաջողեցաւ զայն սզատիլ այս անակնկալ խենթի
կատաղանքէն:

Էմիրը ազատելով, լայն շունչ մը քաշեց, և
խստութեամբ խօսեցաւ խենթին, զոր Համաքօ կ'ան-
ւանէր: Սրր Քրննէթը նախ շատ զարմացաւ, տեսնելով,
որ Էմիրը կերած հարւածները ետ չէր տար խենթին,
բայց յանկարծ յիշեց, որ մահմետականները կը հաւտան,
թէ խենթերը սուրբ արարածներ են, և թէ զանոնք
ձեծողը անէծքի կուգայ: — «Բայց և այնպէս» — ըսաւ
ասպետը, — «այդպիսի խենթ մը սուրբ մէկը չէ, անի-
կա ամօթ մըն է իր ազգին համար» — :

— «Իրա՞ւ կ'ըսէք» — պատասխանեց էմիրը ինդա-
լով, — «այն սուրն ձեզի է ամօթը, որովհետեւ այս
խենթը ուրիշ մէկը չէ, եթէ ոչ ձեր փնտրած Լենկատ-
տիի բարեպաշտ ճգնաւորը» — :

— «Այո՛, այո, ևս Լենկատտիի ճգնաւորն ևմ: Հե-
տեւեցէ՛ք ինձի, հետեւեցէ՛ք ինձի» — : Կաղաղակէր այս
օտարոտի արարածը, առաջն ինկած, պարելով, ցատ-
կոտելով և վայրենի կանչաւոր քներով շարժ ու ձեւեր
ընելով :

Սրբ Քըննէթը, որ երեւակայած էր հանդիպելու
մեղմ և հանդարտարարոյ ճգնաւորի մը, ապշեր մնայե-
ր: Ուրիշ ճար չունէր, եթէ ոչ լուսթեամբ հետևիլ
այս վայրենի մարդուն, որ վագելով, ոստոտելով և
պոռչտալով՝ զինքը կ'առաջնորդէր իր նոյնքան վայրենի
բնակարանը, որ ապառաժի մը մէջ փորած քարայր
մըն էր:

Քարայրը երկու մասի էր բաժնուած, առջևի կող-
մը խորանի մը կր նմանէր, ետեւինը, ուր ճգնաւորը իր
հիւրերը մտցուց, վստահարար խեղճ ննջասենեակ մը կը
ներկայացնէր, որովհետեւ գետինը խախտով ծածկուած
էր և կոշտ ձևով շինուած սեղան մը և աթոռներ կը
նշմարւէին: Սեղանին վրայ դրած կար ոսպ և շոր-
ցած միս:

Ճգնաւորը, որ քարայրը մտնելուն պէս բոլորովին
թողած էր խենթի երեւոյթը, և սրբ Քըննէթի երեւակա-
յած բարեպաշտ և հանդարտարարոյ մարդուն կր նմա-
նէր, երկու հիւրերուն առջևը կտոր մը հաց և ջրին
սափորը դնելով՝ ըսաւ. — «Ոմեցէք և կերէք, զաւակ-
ներս, ձեր գալուստը բարի թող ըլլայ» — : Նախաճաշի-
կէն յետոյ գանոնք օրհնեց և բարի գիշեր մաղթելով
անոնց, քաշեցաւ իր խորանը: Սրբ Քըննէթը և էմիրը,
— որ կ'ըսէր թէ Երլտրըրմ էր իր անունը — ուրիշ գոր-
ծուած մէյմէկ խսիր առնելով, պատրաստուեցան քնանալու:



Քարեպատ եզնաւորին յանկաւածակի երեսուցի

Բաւական ատեն էր, որ սրբ Քրննէթը կը քնանար. իբր ճգնաւորը զինքն արթնցուց և նշան ըրաւ անոր տեղէն ելլիլ ու իրեն հետեիլ, զգուշանալով սակայն, որ էմիրը չխմանայ այս :

Սատիկ զարմացած, սրբ Քրննէթ հետեւեցաւ ճրգնաւորին, որ առաջնորդեց զինքը խորան ծառայող փորւածքը : Յետոյ անցնելով սեղանին ետեր, զսպանակ մը սեղմեց : Առանց ազմուկի դանդաղօրէն քարէ պատ մը իսկոյն բացեցաւ դէպի դուրս, երեցնելով քանի մը սանդուխտաձև աստիճաններ, ներքնակողմին վրայ Բարձրանալէ առաջ, ճգնաւորը դէմքը լաթով մը ծածկեց, ըսելով. — Ինձի թոյլատրւած չէ սեննելու այն, ինչ որ դուն հիմայ պիտի պիտես :

Յետոյ մէկ ձևօքով յապտերը բռնած ցոյց տուաւ ընկերակցին ճամբան : Շատ մը աստիճաններ բարձրանալէ վերջը, հասան ծանր դռան մը առջևը, որու երեսը մեծ մեծ գամերով ծածկւած է : Հոս ճգնաւորը կեցաւ և ըսաւ ասպետին. — « Հանէ՛ կօշիկներդ, գարկ երեք անգամ, և ներս մտիք » :

Սրբ Քրննէթը հնազանդեցաւ, և բացւած դռնով ներս մտնելով, ինքզինքը խաւարէն՝ պայծառ լոյսերու մէջ գտաւ : Փոքրիկ խորան մը տեսաւ, որ ճոխ կերպով զարդարուած էր և յուսաւորուած չլացնող ձևով մը՝ առաստաղէն կախւած արծաթեայ յապտերներով՝ լեփ լեցուն անուշահոտ իւղերով, որոնք դրախտային բուրմուռք մը կը սփռէին չորս կողմը :

Սրբ Քրննէթը չէր կրնար ըմբռնել, թէ ամայի և անմարդարնակ անապատին մէջ, ինչպէս հնարաւոր էր այսպիսի խորանի մը գոյութիւնը : Նշմարեց, որ ճգնաւորը իրեն հետ ներս չէր մտած, և ուզեց ետ դառնալ,

բայց դուռը վրայէն գոցեած ըլլալով, չը կրցաւ զայն բանալ :

Ուստի ստիպւեցաւ կամայ ակամայ մինչև լուսաբացը՝ խորանի լայնքն ու երկայնքը չափչիւնելու : Լուսաբացին սակայն արծաթեայ զանգակի մը հնչիւնը լսեց, որուն հետեւեցաւ երգեցողութեան մը հեռաւոր ձայնը : Խորանին պատին տակը քաշեցաւ : Շատ չ'անցած՝ սեղանին քովէն դուռ բացուեցաւ, և թափօր մը երեցաւ : Ամենէն առաջ երկու պզտիկ մանչեր բուրվառներով, յետոյ ուրիշ երկու պզտիկներ ևս, որոնք ծաղիկներ կը սփռէին, վերջապէս տասներկու աղջիկներ, զոյգ զոյգ : Ասոնք բոլորն ալ ճերմակ չրջազգեստներ էին հագած, միայն թէ առաջի վեցը սև քօղեր էին ձգած : ասոնք կրօնաւորուհիներ էին, որոնք ձգած էին աշխարհը : Երկրորդ վեցը ճերմակ քօղեր կը կրէին, ասոնք ալ կամայն է որ աղջիկներ էին, որոնք օր մը կրօնաւորուհի պիտի դառնային, և կամ բարեպաշտ օրիորդներ կամ տիկիներ, որոնք վանքը ուխտի էին եկած : Այս վերջին վեցը կարմիր ու ճերմակ վարդերէ գրասանգներ (հիւսուած ծաղիկ) կը կրէին, և սրբազան երգեր երգելով յամրաքայլ խորանին շրջանը կ'ընէին :

Ասոնք սրբ Քրիստէթի շատ մօտովն անցան, որ աւելի ու աւելի ապշելով, գիշերուան այս օտարտաի պատահարներէն, կը կարծէր, թէ խոր երապի մը մէջն էր, բայց երբ թափօրը երկրորդ անգամն ըլլալով, անցաւ իր մօտովը, ճերմակ քօղաւոր դեռատի աղջիկներէն մէկը, կոկոն վարդ մը ձգեց անոր ոտքերուն քովը : Ասպետը, յանկարծակի իր բոյոր ուշադրութիւնը լարած՝ շեշտակի նայուածքը բովանդակ զօրութեամբ ուղեց այդ աղջկան դէմքին, սակայն քօղին թանձրութիւնը չը թողուց որ անոր դիմագիծը կարողանար որոշել : Բայց և այնպէս զայն իր աչքերէն չը փախցուց, և այս բանը իրեն նոր






Ինուստի աղջիկ մը կոկոն վարդ մը ձգեց տապեօի ոսկերուն և

վարձատրութեան մը պատճառ եղաւ : Որովհետեւ , թափօրին իր առջեւն անցած միջոցին , ճերմակ և քնքուշ ձեռք մը , ծանր քողին տակէն դուրս ելլելով , երկրորդ կողմն վարդ մը ձգեց ասպեալի ստաքերուն քովը : Այս բանը սրբ Քրննէթի սիրտը աւելի սաստիկ բարախեղ տուաւ , որովհետեւ գաւազակեց , թէ ասիկա ըստօրովն դիպեածական պատահար մը չէր : Դեռ աւելին կար , Որքան ալ որ աշջկան ձեռքը ակնթարթ մը միայն տեսաւ , յայց և այնպէս կրցեր էր նշմարել ձայլ սակիէ մատանի մը : Խոշոր զմրուխտ ակով : Այս մատանին միայն կը բաւէր իրեն յայտնելու , կոկոն վարդերը ձգող աղջկան ով ըլլալը , որ ուրիշ մէկը չէր , եթէ ոչ Լէյտի Էտիթը : Բայց ինչպէս էր հոն եկեր , ինչ գործ ունէր կրօնաորուհիներուն հետ , և այն ալ անապատին մէջ :

Եւ երբ այս հարցումները կ'ընէր ինքնիրեն , պատին մէջ եղող գաղանի դուռը բացեցաւ , և ստերով թափօրը , աղաք , սև քողաւորներ , ճերմակ քողաւորներ , անյայտացան :

Միննոյն վայրկեանին , ըստ լապտերները մտրեցան , և սրբ Քրննէթը մնաց կատարեալ խաւարին մէջ : Խարխալեղով փնտուեց շուրջը թանկագին կրկոն վարդերը և զանոնք որութեան պէս պահեց : Սիւս բունէ մը չէր վախնար , քանի որ Լէյտի Էտիթը զինքը կը սիրէր : Մինչև այս վայրկեանը ան միշտ վախի մէջ էր , և կը տառապէր այն մտածումով , թէ մի' գուցէ Լէյտի Էտիթը զինքը կ'արնամարէր , որովհետեւ Սկովտիացի խոնարհ ասպետ մըն էր միայն :

Փամէ մը աւելի այս դրութեան մէջն էր , երբ յանկարծ ականջ ծակող սուլոց մը հնչեց , և ծուղակ մը բացեցաւ ոտքերուն տակը : Սրբ Քրննէթը դատկեց մէկ կողմ և սուրը քաշեց , առանց գիտնալու , թէ ինչ պիտի պատահէր : Լոյսի հոսանք մը կը տարածուէր բաց-



« ածքէն դէպի վեր , և տարօրինակ մէկը կը նշմարուէր լապտերով մը , որուն ուրիշ մը կը նետուէր : Աստուք զարմանալի պզտիկ արարածներ էին , Գաճաճներ , այսինքն , թէև որոշ տարիք մը ունեցող մարդու և կնոջ լիակատար կերպարանքն ունէին . մեծ գլխով և ծերացած դիմագծերով , սակայն մարմիննին մատղաշ մանկան մը մարմինէն մեծ չէր : Տարօրինակ հագուստներ ունէին , կարմիր ու ճերմակ մետաքսէ կարուած , և գլուխներուն փետուրներ կը կրէին : Զեռքերուն մէջ ցախաւեղներ էին բռնած , որոնցով խորանն ալել սկսան :

Սըր Քըննէթի առջևէն անցած պահուն , ընդհատեցին ալելը , և լապտերները վեր բռնելով՝ շեշտակի նայեցան անոր աչքերուն մէջ , յետոյ սոսկալի քահ , քահ մը փրցուցին , բարձրաձայն աղաղակներ արձակելով :

— « Ո՛վ էք դուք » — հարցուց սապետը զայրացած , խորանին մէջ անոնց հանած անպատկառ խնդուքին ու աղաղակներուն վրայ :

— « Այն Նեքթապան գաճաճն եմ , սոսայ կինս է » — պատասխանեց գաճաճը : Յետոյ մարելով լոյսը , կնոջը հետ , բոլոր ուժովը կազն ի կազ թողեց փախաւ , ձգելով ասպետը խաւարին մէջ : Բայց այս երկսօք չը տեսեց , որովհետև խորանէն դէպի դրսի քարէ սատիճանները ասանող դուռը , քիչ վերջը կամոց մը բացեցաւ , և սեմին մօտ նշմարեց ճգնաւորը ձեռքը վառած ճրագ մը բռնած , և ճիշտ դէպի խորան առաջնորդած ձևովը , այսինքն աչքերը լախով մը ամուր կապած :

— « Բունէ ճրագը , և աստիճաններէն վար իջիր առջևէս » — ըսաւ ճգնաւորը , — « որովհետև ես իրաւունք չունիմ աչքերս բանալու և այս սուրբ տեղը դիտելու » — :

Ասպետը լուռ թեամբ հնազանդեցաւ , և քիչ վերջը արդէն դարձեալ ննջասնեակն էին հասած , ուր էմիրը կը շարունակէր հանդարտ քուն մը քաշել : Ծգնաւորը

ասպետին ուռիէ խտիրը նշանացի ցոյց տալով, ըսաւ. —
«Քնագիր, իսկ ես պէտք է որ աղօթեմ» — :

Յաջորդ առաուն սրբ Քրննէթը իշխաններուն յանձ-
նած պատգամագիրը, ներկայացուց ճգնաւորին, և պա-
տասխանին սպասելու համար, դեռ երկու օր ալ մնայ
քարայրին մէջ, սակայն իրեն չր թոյլատրեցաւ սլեսս
ոչ խորանը մտնել, և ոչ ալ լէյտի էտիթը անգամ մըն ալ
տեսնել :

Գ. ԱՆՄԱՆՈՅ ԲԺԻՇԿԸ

Մինչդեռ սրբ Քրննէթը էնկատտիի քարայրին մէջ
ճգնաւորի պատասխանին կը սպասէր, Ռիչարտ թագա-
ւորը, տարածուած վրանին տակ, Աքեայի մօտի բա-
նակատեղիին մէջ, կը տառապէր անկողին ինկած : Տենդը
զինքը սուտիկ տկարացուցած էր, և իսկական հիւանդի
մը վերածած : Սաստիկ տաքութեան միջոցին նեղսիրտ
կը դառնար ու կը զառանցէր : Գոմէ էին դրած իր զէն-
քերն ու կռի տապարը, բայց ուժերը կը պակսէին ոչս
վերջինով վարժութիւններ ընելու, ինչպէս որ իր սովո-
րութիւնն էր : Շատ դժգո՛ն էր տեսնելով, թէ հիմա, երբ
ինքը հիւանդ էր, քրիստոնեայ իշխանները իրարու հետ
կը կռւէին. սակէ զատ, շատ աւելի անհանգիստ էր իր
կնոջ, Պէրանժէր թագուհու մասին : Եւ իսկապէս Անգլիոյ
ամենարարձր ազնուական դասի մէկ քանի արկիւններու
հետ, թագուհին էնկատտիի վանքն էր գացած, իր ա-
մուսնու՝ Ռիչարտ թագաւորի, բժշկութիւնը խնդրելու :
Ասով ալ կը բացասուի սրբ Քրննէթի և լէյտի էտիթի
իրար հանդիպումը, ճգնաւորի քարայրին վերի կողմը
փորուած խորանին մէջ :

Թագաւորը իր անհամբրութեան նոպաներուն մէջ,
ժամանակ առ ժամանակ, անկողնէն կը փախչէր, սա-



կայն , ամէն անգամ , հսկայ և ուժեղ մարդու մը միջոցաւ , որ խիստ կերպարանք մը ունէր , և միշտ բարձին քովէ էր կեցած , զարձեալ իր անկողինը կը տարուէր : Այս մարդը շատ բարձր ազնուական մըն էր , Թօմաս սնունով , որ Կուսպրլանդի կոմսն էր : Անիկա լռակեաց էր , և քիչ մը վայրագ , և ուրիշները երբեմն կը կարծէին , թէ կոպիտ էր , և նոյնիսկ յիմար , սակայն այս մեզադրանքները սխալ էին : Անիկա միայն հաւատարիմ հին գլխուոր մըն էր , յամառ և կատաղի : Թագաւորին ալ սիրելին էր , և միակ մարդն էր , որուն Լիչարտը կը թոյլատրէր զինքը խնամելու :

Քեզ յար Թօմասը ամեն անգամ ամէն տւելի թթւած դէմք մը ունէր . որովհետեւ երեք գիշեր իրարու վրայ աչքերը չէր զոցեր , երբ յանկարծ , թմբուկներու ձայն մը առու :

— «Աստուած իմ» — ազազակեց թագաւորը , անկողինէն կլկլով , — «մահմտականները մեր բանակատեղին են մտեր : Անոնց պատերազմական ազազակները կը լսեմ» — :

Բայց , սրբ Թօմասին համար , իր տիրոջ ապահովութիւնը ամէն բանէ վեր էր , անկէ յետոյ կուգային իր բանակի և մահմտականներու մասին խորհիլը : Մեծ դժարութեամբ յաջողեցաւ թագաւորը նորէն անկողին դարձնել , և քանի մը ծառաներ կանչելով հիւանդին հրակելու համար , ինքը մեկնեցաւ ազմուկի մասին տեղեկանալու , որ կ'անհանգստացնէր բանակը :

Ապշեցուցիչ զարմանքով մը , բանակի մուտքին առջեւ տեսաւ ամբողջ վաշտ մը մահմետական հեծեալ պատերազմիկներու , որոնց կը հետեւէին արեակէզ դէմքերով քաղմաթիւ ծառաներ ու թմբկահարներ :

Սրբ Թօմասը առաջանալով կ'ուզէր քացատրութիւն մը պահանջել , երբ սյր Քրինէթը դէմը ելաւ , որ բանակը կը մտնէր :

— «Աբր թօմաս» —, ըսաւ ասպետը, — «էնկատա-
տիի ճգնաւորին աւած այցելութենէս այս իսկ վայրկեա-
նիս է, որ կը վեռադասնամ: Իշխաններու Խորհուրդը
զիս պատգամով մը անոր քովն էր զրկած: Ճամբան ազ-
նւակոն մահմետականի մը հանդիպեցայ, որ ինծի քա-
ւական տտնն ընկերացաւ: Տեղեկանալով որ Ռիչարտ
Թագաւորը հիւանդ էր, և սոսկալի տենդէ մը կը տառա-
պէր, ան խոստացաւ ինծի, բաները մը զրկել իր տիրոջ,
Սուլթան Ալլահալտոխինն պալատը: Հակառակ այն բանին,
որ Ռիչարտ Թագաւորը Սուլթանին թշնամին էր, սա-
կայն վերջինս մեծահոգի և տապետական մէկն ըլլալով,
պիտի ինդրէր անկէ, որպէս զի իր անձնական բժիշկը
հաճէր զրկել, որ շատ ճարտար էր Արեւիքի երկիրնե-
րուն յատուկ այս կարգի տենդերը բուժելու մէջ: Եւ
ինչ որ ինծի խոստացեր էր, այնպէս ալ բերեւ էր, և
Սուլթանը ամեն տեսակ սրտագին բարեմտութիւններն
բով, զրկեւ է իր հոշակաւոր անձնական բժիշկը, էլ հա-
քիմը: Իսկ այն միւս մահմետականներն ուրիշ մտրդիկ
չեն, եթէ ոչ բժշկին ընկերացող պահակներ ու ծառաներ» —:

Աբր թօմասը շատ կը կասկածէր Ակովտացիներէն,
որոնք Թագաւորին միայն դժբաղդութիւն կրնային ցան-
կալ: Երբ ինքը Անգլիա էր, միշտ իր դրացի Ակովտա-
ցիներուն հետ կուր մէջ էր, և չէր մոռցած, թէ սրբ
Քրիստոս ինքն ալ Ակովտացի մըն էր: Եւ գոռոզարար,
ինչպէս կրնայ ըլլալ անգլիացի տղնական մը, իր ար-
տաւսարարութեամբը հասկցուց, թէ չի վստահիր անոր խոս-
քերուն, և վիրաւորիչ ձեռով մը բաւ:

— «Ոչ մէկ մահմետական չի կրնար Թագաւորին
մօտենալ, քանի դեռ իմ բազուկներս կրնան արդիւնել:
Թագաւորը պիտի բժշկեն, ձեր կարծիքով: Բայց ինչ
գիտնամ, թէ Սուլթանին բժիշկը չէ եկած զայն սպան-
նելու: Դժբաղդութիւններու այս երկրին մէջ, գիտէ՞ք



Ոչ մէկ մահճեակիւն չի կրնար մտնել թագաւորին

թէ կերակուր մը եփելու շափ դիւրութեամբ մարդ կը թունաւորեն» — :

Այս անլսասանութեան ծանր վիրատորանքը, թէ և զրգոց Սըր Քրննէթի անձնասիրութիւնը, բայց բռնկող ինքզինքը, ըսաւ .

— «Որպէս քրիստոնեայ ասպետ մը ևս կ'երդնում պատւիս վրան, որ մահամետական բժիշկը դաւապիր մը չէ, և ես եւ կեանքովս պատասխանատու եմ, եթէ թագաւորին վտանգ մը հանդիպի : Ասկէ զատ, երբ առտուն բանակատեղին հասայ, իմ վահանակիրս կը տառապէր անտանելի կերպով կը միեւնոյն տենդէն, ինչ որ անի Ռիս : Բայց թագաւորը : Քանի մը որերէ ի վեր ան բնաւ չէր կրցած քնանալ : Այս արաք բժիշկը անոր դեպ մը տուաւ, և արդէն բաւականին հանգիստ է հիմայ» — :

— «Կրնայի՞ անգամ մը տեսնել, ձեր հիւանդ վահանակիրը, սրբ ասպետ» — , հարցոյց Թօմասը դեպ բաւական անսիրայիր : Ասպետին արիւնը գլուխը խուժեց, և երևար կաս կարմիր կտրեցաւ բարկութենէն . — «Այո՞» — պատասխանեց վիհութեամբ . — «Բայց յիշեցէ՛ք, որ Սկովտլոնդի խեղճ ասպետի մը բնակատեղին շատ խեղճուկրակ է, համեմատած անգլիացի մը բնակատեղիին հետ» — : Ընչտ կ'ըսէր : Իր բնակատեղին կոչու ու կուպիտ խրճիթ մըն էր, իբր ծառայ չոն կը գտնուէր պատանի մը, որ փայտածուխի կրակի մը վրայ գարիկ հացիկներ կ'եփէր : Ասոր քովը պառկած էր սքանչելի որսի շուն մը, շատ աւելի գեղեցիկ, քան թէ իրեն՝ թագաւորինը : Խրճիթին մէջ երկու անկողիններ կային, որոնցմէ մէկուն վրայ պառկած էր հիւանդ վահանակիրը, որ այս պահուն աւելի կանոնաւոր կը շնչէր, և այնպէս կ'երեւար, թէ կը քնանար : Գլխուն վերեւը նստած էր արաք բժիշկը, որ սեփ սեւ կ'երեւար, որովհետեւ գլուխը ծածկած էր սեւ ուլակի մորթէ շինած սրածայր գլխա-



նոցով մը, հագած էր վերէն վար սև վերարկու, կուրծքին վրայ կր փռւէր սև և երկար մօրուք մը, և զլիսանոցէն վար իր երկու թափանցող փայլով աչքերը, սև էին նմանապէս, Երբ ասպետն ու սրբ թօմասը խրճիթէն ներս մտան, բծիչը իսկոյն ոտքի ելաւ ։

— «Ձեզմէ կր խնդրեմ» — ըսաւ, — «հիմայ մի արթնցնէք հիւանդը, ապա թէ ոչ կամ իսկոյն կր մնանի և կամ կր խելագարի ։ Հանգիստ թողէք մինչև իրիկուսան աղօթքի ժամը, այն ատեն ես հարկ եղածը կ'ընեմ, որ ողջ և առողջ արթննայ» — ։

Ասպետները առանց խօսք մը ընելու հետուցան, և սրբ թօմասը, որ յուզւած էր տեսնելով խրճիթի աղքատութիւնը, և որ, հակառակ իր անսաշուծեանք բարի սիրտ մը ունէր. ըսաւ, «— Սըր ասպետ, ձեր վահանակիրը խնամքի և լաւ սնունդի պէտք ունի ։ Շատ կը խնդրեմ, ընաւ չը նեղանաք, եթէ ձեզմէ թոյլտուութիւն ուղիւմ, իմ կողմէն անոր համար քիչ մը անուշեղէն զըրկելու» — ։ — «Շատ շնորհակալ եմ» — ըսաւ սրբ Քրննէթը, — «բայց այդ բանն աւելո՞ւք է ։ Ռուզվէլը անաւասիկ (և ցոյց տուաւ իր օրսի շունը) կը հոգայ սերճաչը» — ։ Այս ըսելով նայւածք մը նեանց թարմ սպաննւած երէի մը մտի մեծ կտորին վրայ, որ վրանին քովը կախւած էր ։

Դ. Թ Ա Լ Ի Ս Ս Ա Ն Ը

— «Ա՛ն քեզի տարօրինակ պատմութիւն մը» — ըսաւ թագաւորը, երբ սրբ թօմասի տեղեկութիւնները լսեց. — «բայց դուք կը կարծէ՞ք արդեօք, թէ կարելի է վստահիլ այս Սկովտացի ասպետին» — ։

— «Ձը գիտեմ» պատասխանեց սրբ թօմասը կտրուկ, և իսկոյն աւելցուց, — «Ձեր վեհափառութիւնը գիտէ

արդէն, թէ ևս Սկովտացիները չեմ սիրեր, բայց այս մարդը ճշմարիտ սասկետի մը տպաւորութիւնը կ'ընէ, և ես առիթն ունեցած եմ հիանալու անոր զինուորական քաջութիւնը վրայ» — :

— «Այո՛, իսկպէս» — պատասխանեց թագաւորը. — «ես տեսած եմ զինքը ճակատամարտի մը մէջ, ուր առիւծի մը պէս կը կուէր, և իր անվեհեր քաջութիւնը այնքան խոր էր ազդած վրաս, որ ցանկացայ իմ իսկ ձեռքերովս զինքը բարձր շնորհքի արժանացնել: Սակայն նկատելով, որ նաեւ գուռը էր ու անձնաւստան վերջին ծայր, լան մըն ալ չը շնորհեցի» — :

Թագաւորը լսելով, որ Սկովտացի սասկետը Էնկատտի էր գացած, սաստիկ բարկացաւ: Սրովհետեւ այդ միջոցին հոն էր, վանքին մէջ, թագուհին իր պալատական օրիորդներով: Եւ ինքը նշմարեւ էր, թէ Սկովտիացի ազգաս սասկետը կը յանդգնէր Էտիթ իշխանուհին սիրել: Իսկ այս մասին, ինչպէս որ առաջ բառ մը չէր յայտնած սրբ թօմասին, հիմայ ալ բան մը չըսաւ, միայն թէ սաստիկ յուզուեցաւ: Եւ զայրոյթն ու յուզումը ծածկած տեղեկանալով արար բժիշկի դեղերու ազդեցութեան մասին, ինչ որ կը վկայէր հիւանդ վտանակիրի վիճակի անվիճելի թեթեւացումը, լսաւ՝

— «Իսկոյն բժիշկը կանչել տէք, ինքզինքս անոր պիտի յանձնեմ» — :

— «Ոչ տակաւին տէր» — ըսաւ զգուշաւոր թօմասը, «— նախ սպասենք մինչեւ իրիկուն, տեսնելու համար, թէ հիւանդը աղէկցած է բոլորովին» — :

Երբ իրիկնապահ եղաւ, սրբ թօմասը եպիսկոպոսի ընկերակցութեամբ սրբ Քրննէթի բնակատեղին գնաց: Ըիշտ ս. ճիշտ, ինչպէս որ բժիշկը յայտարարած էր, հիւանդն արթնցաւ, և թէպէտ նիհարցած ու այտերը փոսն ընկած, սակայն առողջ մարդու մը պէս գիտակ-



Միտառակի իմ բովիւմանս։ — ըստ բժիտիք

ցու թիւնը վրան էր, և ամենեւին տենդ չունէր: — «Ի՞նչ դեղ կը գործածէք» — հարցուց եպիսկոպոսը: — «Նայեցէք, հիմայ նոյն դեղէն երկրորդ բաժին մը պիտի տամ հիւանդին» — պատասխանեց էլ հաքիմը: Արծաթեայ թասի մը մէջ ջուր լեցուց, յետոյ զգեստներու մէջ արծաթէ կապերով կարմիր մետաքսէ պզտիկ պարկ մը հանեց, և — «Ահաւասիկ իմ ինչիսմանս, որով ես կը բժըշկեմ» — լսաւ:

Ապրիլ թասին մէջ դրաւ և հինգ վայրկեան հոն պահեց: Յետոյ պարիլ թասէն հանելով՝ ջուրը խմցուց հիւանդին բսելով՝ — «Իսմէ՛, զնայի՛ր և բժշկեա՛ծ արի՛թնցի՛ր» —:

— «Ի՞նչ կրնա՞ք այս պարզ միջոցով նաև թագաւոր մը բժշկել» — հարցուց եպիսկոպոսը:

Այս անտեղի հարցումին վրայ լմաստուն բժիշկը պատասխանեց՝ —

— «Թի՛թէ կը կարծէք, թէ թագաւորը նոյնպէս մահկանացու մը չէ՛, ինչպէս իր ամէն մէկ հպատակը: Ինչո՞ւ դժւար պիտի բլլայ նաև թագաւոր մը բժշկելը, այս պարզ միջոցով» —:

Երբ սրբ թօմասը դարձեալ թագաւորին քովը կը վերադառնար, ասիկա աւելի ու աւելի անհամբեր դարձած՝ մարդ էր դրկէր սրբ Քրննէթը կանչելու: Այնպէս որ սրբ Քրննէթը սրբ թօմասէն առաջ արդէն թագաւորին քովը կը գտնուէր:

— «Ա՛յր Ակովտայի» — ըսաւ թագաւորը. — «ես ձեզի դիտած եմ ճակատամարտի մը մէջ, դուք իրաւցընէ իսկական ասպետ մըն էք: Ինձի տեղեկացուցած են թէ իշխաններու խորհուրդը գրաւոր պատգամով մը, ձեզի էնկատտիի Թէօդորիկ ճգնաւորին մօտն է դրկած: Մեր թշնամին, սուլթանը, կը ճանչնայ և կը յարգէ այս ճգնաւորը: Ըսէք, խնդրեմ, արդեօք ձեր դիմումին

նպատակը զինադուլն երկարաձգելն էր երկու. թշնամի բանակներուն միջև» — :

— «Ոչ» պատասխանեց սրբ Քրննէթը — «գիմու մին նպատակն էր մշտական հաշտութիւն մը կնքել, և վերջ տալ այս խաչակրութեան» — :

Թագաւորը տեղէն վեր ցատկեց, բարկութենէն կատղած. — «Դաւաճաններ, վախկոտներ» — աղաղակեց. — «և ճգնաւորը ինչ պատասխանեց» — :

— «Այդ բանը չր գիտե՛մ, Տէ՛ր» — , պատասխանեց սրբ Քրննէթը. — «Բայց կը կարծեմ, թէ ան ալ համամիտ է այս ծրագրին. որովհետև, շատ շատերու հետ միասին, ան ալ այն եզրակացութեան է ստիպւած եղեր գալու, թէ, քանի դեռ Ռիչարտ թագաւորը ինքն անձամբ չի վարեր բանակը Սէլա՛նէտտինի դէմ, խաչակիրները չեն կրնար շահիլ և ոչ մէկ ճակատամարտ» — :

Թագաւորը լռեց, գիտնալով թէ այս բանը ճշմարիտ էր: Ընդ այս վայրկեանին սրբ Թոմասը վրանը կը մտնէր: Սակայն վայրկեան մը կեցաւ, մտիկ ընելու. ծառային տեղեկութիւնները: Ասիկա ցուցնելով եկող իշխանները, կը յայտնէր, թէ Տաճարականներու գլխաւոր արարողապետը իր սարեկամ Մոնսէրրայի մարքիզ Կոնտրատի հետ, քրիստոնեայ իշխաններու թախանձանքին վրայ, եկած են աղաչելու Ռիչարտ թագաւորին, որ չը վտանգէ իր կեանքը, զայն արար քթիչկի մը ձեռքերուն յանձնելով:

Բայց սրբ Թոմասը, որ, իրաւացի կերպով, կը խորհէր, թէ այս իշխաններէն շատ շատերը բնաւ երբէք չէին ցանկանար թագաւորին առողջանալը, ձայնը եկողներուն կողմն ուղղելով՝ պատասխանեց. — «Ազնուական տէրեր, այս արարը յանձառու կ'ըլլայ բժշկել իմ թագաւորս, և, եթէ յաջողի, ինձի համար բոլորովին միևնոյնն է, թէ բժշկողը մահմետական է, թէ քրիստոնեայ:



Ամէն պարագայի մէջ, ևս կ'ուզեմ որ անգամ մը փորձէ» -

— « Այո՛ , այո՛ , ևս կ'ուզեմ » — ազագակեց իս-
գաւորը վրանի ներսէն , լսած ըլլալով անցած խօսակ-
ցութիւնը : Եւ յետոյ աւելցուց՝ — « Ամէնքդ ալ ներս
եկէք » — :

Ամէնքն ալ նախա լրանէն անցնելով , մտան երկրոր-
դին մէջ , ուր թագաւորն էր պառկած : Էլ Հափինն ալ
արդէն հոն էր , և ամէնքը շետաքրքրութեամբ կը դի-
տէին զինքը : Ծիշտ առաջւանս պէս , արար բժիշկը թախ-
խեց « իր թըլըսըմը » . ինչպէս որ ինքը կ'անւանէր , թաս
մը ջրի մէջ , և յետոյ առաջարկեց թագաւորին . խմել
ջուր :

Թագաւորը առանց վարանելու խնայե խմեց , և
գրեթէ հոյն վայրկեանին ալ խոր քունի մը մէջ ինկաւ :

Էլ չաքիմը , սրբ թօմասէն զատ , միւսներուն բոլո-
րին ալ սրգիլեց հոն մնալը , ինչպէս նաև որ և է մէկու
մը վրանէն ներս մտնելը : Եւ ինքը արքայական անկող-
նին քովը նստած՝ սկսաւ իր հիւանդին հսկել :

Ե. ԾԱԳԱԿՈՐԻՆ ԹԵՆԱՄԻՆԵՐԸ

Եթէ սրբ թօմասը կարենար հետեիլ Տաճարա-
կաններու մեծ արարողագետին ու Մարքիզին . պիտի
կարողանար տեսնել , թէ իր կասկածնէր արդարացի
էին ասոնք ո՛չ մէկ գնով չէին ուզեր , որ թագաւորն
առողջանայ , սուրբանին դէմ քրիստոնէական բանալին
առաջնորդելու համար : Տաճարականները լաւ գինուորներ
էին . բայց շատ հարուստ և չափազանց յաւակնոտ , և
մեծ արատողագետը գիտէր , թէ երբ խաչակրութիւնը
վերջանայ , քրիստոնէայ իշխանները պիտի համաձայնին
իրենցմէ ետ առնելու իրենց իրաւասութեանց մէկ մասը :
Այս պատճառով ալ ան շահ ունէր Ռիչարտը միշտ հի-
ւանդ տեսնելուն մէջ , որը հաստատողն ու գործադրողը
պիտի ըլլար իշխաններու վճռին :

Գալով մարքիդ Կօնտրատին, ան գիտէր, թէ իսպակիրներու յաղթանակէն յետոյ, Երուսաղէմի համար քրիստոնեայ թագաւոր մը պիտի նշանակուի. և ատիկա կրէ՛ք ինքը չի պիտի ըլլար, որովհետև Ռիչարտը այդ ակոռին համար, աւելի յարմար մէկը պիտի ընտրէր: Ասկէ զատ, Կօնրատը սուլթանին հետ հաշտութեան դաշինք կնքել կ'ուզէր, փոխարէնը անկէ հողեր և օգնութիւն ստանալու համար:

Երբ երկուքը առանձին մնացին, առանց այլեւս իրենց ներքին խորհուրդները իրարմէ ծածկելու, համաձայնեցան աշխատիլ Ռիչարտը կերպով մը կորսնցնելու:

— «Բայց այս բժշկին գալը մեր գործին բնաւ չի գար» — ըսաւ Կօնրատը: — Միայն բան մը կայ, որ Ռիչարտը դեռ հիւանդ է, և պէտք է որ մենք, առողջանալէն առաջ, իրեն դէմն հանենք Ֆիլիպ Օկիւսան ու Աւստրիոյ մնայարժ արհիդուքսը:

— «Առողջանալէն առաջ» — պատասխանեց մեծ արտորդապետը, — «սակայն պէտք չէ որ ան բժշկուի, երբե՛հ: Այլևս այդ մասին ոչ մէկ խօսք, ինծի ձգեցէ՛ք անոր ճակատագիրը, և ես շատ լաւ գիտեմ իմ լնելիքս. իսկ ստայժմ ցտեսութիւն:


Եսմորդ օրն իսկ, մարքիզը առիթն ունեցաւ արհիդուքսը զայրացնելու Ռիչարտի դէմ, և ահա թէ ինչպէս: Արհիդուքսի վրանին տակ ճաշելու հրաւերն ընդունելով՝ երբ ճաշի կ'երթար, նշմարեց բանակատեղիին կեղրոնը գանուղ բլուրը, զոր «Ս. Գէորգի բլուրը» — կ'անուանէին. որու ամենաբարձր մէկ կէտին վրայ հպարտութեամբ կր ծածոնէր անգլիական դրօշակը: Այս դիտողութիւնը իրեն ներշնչեց հանճարեղ միտք մը: Երբ արհիդուքսը այնքան զինի խմեց, որ սկսաւ այլևս ինքն իր դատողութեան տէրը չըլլալ, մարքիզը, նպաստաւոր վայրկեանն հասած սեպելով, սկսաւ զանգատիլ, թէ հակա-

ուակ որ քաղմաթիւ իշխաններ միասին կը կուէին այս սրբազան պատերազմին մէջ, սակայն միայնակ դրօշ, որ կը ծածանէր բանակին վրայ, անգլիական էր: Եւ աւելի ազգու շնչտով մը կ'աւելցնէր. — «Ասիկա այնպէս չը պիտի՞ երեցնէ, թէ Րիչարտ թագաւորն է Քուչակիրներու պետը, և միւս բոլոր իշխաններն ալ անոր ծառաները»:

Արհիդուքսը կէս գինով վիճակի մէջ, այս խօսքերէն կատրած՝ իսկոյն սուղանէն ելաւ, և շիտակ Ս. Գէորգի բլուրը վազեց. յայտարարելով, թէ պիտի պատուէ Անգլիոյ դրօշակը, անոր տեղը իրենը բարձրացնելով:

Իր բարեկամներն ու ծառաները շատ աղաչեցին իր պաղարիւնութիւնը չը կորսնցնելու, չը դաշելու մանաւանդ անգլիական դրօշակին, այլ իրենն ալ անոր քովը զարնելու. ինչպէս որ ալ եղաւ:

Բայց և այնպէս ազմուկն, ու բանակին իրարանցումին ժխորը, մինչև թագաւորին վրանն հասան ճիշդ այն պահուն, երբ էլ Հաքիմը կը յայտնէր թէ թագաւորը պիտի արթննայ, ազատուած իր տենդէն, ինչպէս որ ալ եղաւ: Թէև ան նիհար, տկար և տժգոյն էր, սակայն առողջացած էր: Միայն հանգստի պէտք ունէր, բայց իր դրօշակին դէպքը լսելուն պէս, ցատկեց անկողնէն, և սուրը ձեռքն առնելով՝ վրանէն դուրս նետեցաւ, հետեորդ ունենալով միայն Սըր Թօմասն ու սրը Գրննէթը: Առաջինը թագաւորին ետեւէն վազելով հանդերձ, մարդ զրկեց անգլիացի ազնւականի մը ըսելու, որ հաւաքէ իր մարդիկը և անյապաղ Ս. Գէորգի բլուրին առջևը հասնի: Երբ բլուրը հասան, թագաւորը, հիւանդ, փրցուց աւստրիական դրօշակը, յետոյ հարցնելով՝ — «Ո՞վ կը համարձակի գետեղել այս քուրջը անգլիական դրօշակին քով» —, պատուտեց զայն և ոտքերուն տակն առնելով կոխկոտեց: Այն ատեն ուժ-



գին իրարանցում մը սկսաւ ծայր տալ : Արհիդուքսը ցածհոգի մէկն էր . բայց իր սլալատականներէն մէկը . հունգարացի ազնւական մը , առաջ նետուեցաւ աւստրիական զրօշակին եղած նախատինքին վրէժը լուծելու : Լիչարտ թագաւորը , որ հակառակ իր հիւանդութեանը , արտակարգ ուժի տէր էր . ինչո՞ւ ազնւականի մէջքէն բռնեց . և զայն օղին մէջ բարձրացնելով նետեց ամբոխին մէջ : Սարսափելի ժխոր մը փրթաւ : Աւստրիացիները սուրերը քաշեցին . ինչպէս նաև Անգլիացիք . որ նոր կը հասնէին : Բայց ճիշտ բնդհարւելու վայրկեանին , իմաստուն Ֆիլիպ-Օկրիստը վրայ հասնելով՝ միջամտեց :

Անիկա յաջողեցաւ մեղմացնել զոռոյ և զայրացած թագաւորը . ինչպէս նաև գոհնիկ արհիդուքսը . բայց չը կրղաւ զանոնք իրարու հետ հաշտեցնել : Բիչարտ թագաւորը բնաւ խաղաղասէրի մը երկոյթը չունէր . մինչդեռ սրբ թօտաւր միւս ճիգեր կ'ընէր զայն համոզելու և անկողին վերադարձնելու : Թագաւորը վերջնապէս հաճութիւն տաւ հանգստանալու . բայց , զրօշակը աչքին պարնելով , խորհեցաւ . թէ գիշերը կրնային զայն դարձեալ վար առնելու փորձ մը բնել : Աւստի իր քովը կանչեց սրբ Քրննէթը . և սնոր յանձնարարեց սմբողջ գիշերը հոն պահակ կենալ , ու պաշտպանել Անգլիոյ դրոշակը : Եւ սրբ Քրննէթը ուրախութեամբ յանձն տաւ այս ծանր պաշտօնը , որովհետեւ կ'ուզէր սր թագաւորը ճանձնար իր քաջութիւնը . և արժանի դատեր պիտի էր իշխանութիւն ամուսինը դառնալու :

Ձ. ԱՆՊԱՏԻՇԻԱՄ

Կէս գիշեր էր : Խաղաղած բանակատեղիին մէջտեղը , արքայական զրօշակին քով , կեցած էր սրբ Քրննէթը , և ոտքերուն առջև կը տարածէր իր հաւատարիմ որսի շունը՝ Ռուզվէլը :



Տիչարս թագաւորը իր նախաւաւած գրօտակին վրէժը կը լաւծի

Յանկարծ շունը հաչեց, և պտրտիկ էակ մը լուսնի լուսին մէջ յայտնուելով՝ եհաւ սրբ Քրննէթի առջեւը կեցաւ : Այս տարօրինակ էակը նէքթապան գաճաճն էր, մէկը այն երկուքէն, զոր ասպետը տեսած էր Էնկուտտիի խորանին մէջ :

— «Սրբ ասպետ» —, ըսաւ այս պտրտիկ էակը, խորհրդաւոր կերպարանք մը ընդունելով . — «ես դրկեամ եմ գեղեցիկ իշխանուհիի մը կողմէն, որ կր խնդրէ ձեզմէ, որպէս իր բնարած մէկ ասպետը, ամէն բան ձգել և իրեն օգնութեան հասնիլ» — :

— «Ի՞նչ կ'ըսէք, պաշտօնս ձգել և պատիւս կորսնցընել» —, հարցուց զարմանջով սրբ Քրննէթը, կարծելով թէ լուսնի հասկնար իր խօսակիցը :

— «Ձեր պատիւը, սրբ ասպետ» —, ըսաւ գաճաճը, — «ձեզի կը պարտաւորեցնէ գալ հոն, ուր որ կը կանչէ ձեր տիկինը : Անիկա հոն է, այն վրանին տակ, և, տեսէք, այս նշանն ալ դրկած է ինծի հետ» — : Այս բտելով, ներկայացուց Լէյտի էտիթի գմբուխտ ակով ձոյռակի մասանին, իր սիրած ծիրանեզոյն ժաղաւէնի մը հանգոյցէն կախած : Սրբ Քրննէթը չը գիտէր ինչ ընելիքը : Խօսք էր տւած տեղէն չը շարժելու, և անխափան դրօշակի հսկողութիւնն ընելու : Բայց միեւնոյն ատեն գիտէր, թէ Լէյտի էտիթը շատ հպարտ էր, և զինքը վնասած չը պիտի ըլլար : Եւ, երբ քիչ մը կը տարակուսէր գաճաճին իշխանուհիին կողմէն գալու մասին, գաճաճը աւելցուց . — «Անիկա ձեզի հետեւեալ պատգամը դրկեց .

— «Ըսէ ոմոր, թէ այն ձեռքը, որ վարդի կոկոններ վար ձգեց, կարող է նաեւ դափնիներ դնելու » :

Այս յայտնութիւնը ամէն բան լմնցուց : Դեռ վրան կը պահէր վարդերը, նւիրական մասունքներու պէս : Ուստի Ռուզվէլը կանչելով, անոր նշանացի հասկը-



Սր Բըննէք արեայական դրօսակին պահակ կեցած է:

ցուց հակել դրօշակին վրայ, իսկ ինքը գաճաճին ետևն ինկած՝ արագ յաղլբով կորաւ իսուարին մէջ, Գաճաճը զանալան ծուռ ու մուռ ճամբաներէ զինքն առաջնորդելէ վերջը, վրանի մը սակ մտցուց՝ փափասալով. — «Հոս սոգասեցէք» — : Արը Քրճնէթը իսկոյն կանտցի ձայներ առաւ, որոնք միջնորմի միւս կողմը կը խօսակցէին. և հասկցաւ, թէ Րիչարտի կնոջ՝ Պերանտէրի արքայական վրանին տակ կը դանուէր ինքը. և թէ թագուհին ու իր շքախումբի կիները կը ինդային միասին : Հետաքրքրած, մանաւանդ իր անունը արտասանելը սրտչելով, աւելի սրեց ականջները, և լսեց թագուհին ձայնը, որ իշխանուհի էտիթը կը կանչէր. յետոյ, խորին դարմանքով մտիկ րբաւ, թէ ինչպէս թագուհին Լէյտի էտիթին կը բացատրէր՝ անոր անունով խողցւած հիանալի խաղ մը, ասպետի գլխուն : Լէյտի էտիթը միշտ սնոյցած էր, թէ ո՛չ մէկ բան չէր կրնար սրը Քրճնէթը իր յանձնատու եղած պահակի պաշտօնէն հեռացունել : Թագուհին այ գաճաճն էր զրկած. էտիթի անունով, խնդրելու սրը Քրճնէթէն, իսկոյն ոգնութեան հասնելու իրեն, — «Եւ այ՛ սասպետը խենթի մըն է, ինչպէս որ ես նախապէս տեսած էի սրդէն» — վերջացուց թագուհին. — «որովհետեւ գաճաճն ինձի յայանեց, թէ ասպետը եկած է, ձեր մատանին տեսնելով» — :

Արը սրը Քրճնէթը այս բոլորը լսեց, յուսահատութեան մէջ ինկաւ, բայց իր յուսահատ վիճակը ոչինչ էր, համեմատած Լէյտի էտիթին հետ : Վերջինս շատ լաւ գիտէր, թէ Ռիչարտ թագաւորը քնաւ գուրի չունէր դասալիք զինուորի մը հանդէպ, և կ'ըմբռնէր թէ զինքը սիրող ասպետը հաւանականաբար անպատիւ մահով մը պիտի մեռնէր : Եւ այս բոլորը անապարծ թագուհիի մը թեթեւամտութեան պատճառով : Կծու յանդիմանութիւններ ընելով թագուհին, էտիթ իշխանու-



մինկնեցէ՛ր, մեկնեցէ՛ր, և իսկո՛յնս — ԸՍՏԱՆ ԼՆԿԻ ԷՃԻՐԸ

հին իսկոյն ետ քաշեց գորգէ միջնորմը, որ Քրննէթը սրքայական սենեակէն կը դատէր, և անոր պաղատեցաւ. ներողամիտ ըլլալ ու վերադառնալ իր պաշտօնին. անպատուած ըլլալէն առաջ:

— «Ազնւական որիորդ» —, ըսաւ սրբ Քրննէթը տխուր ձայնով մը. — «ես արդէն անպատուած եմ: Կրնամ ձեզի վերադարձնել ձեր մատանին» —: Այս բանով ներխոյսցուց անոր սքանչելի զմրուխտը, որ իր կորուստին պատճառ էր եղած:

— «Ո՛չ, ոչ: Պահեցէ՛ք զայն, որպէս ինձմէն յիշատակ» —, պատասխանեց էտիթը:

— «Բայց, ա՛հ, կը պաղատիմ ձեզի, մեկնեցէ՛ք իսկոյն»:

Սրբ Քրննէթը հնազանդեցաւ. բայց բոլոր հասնելուն պէս, տեսաւ թէ իր թշնամիները արդէն իրենց ուզածն ըրեր էին: Անգլիական դրօշակը աներևոյթ էր եղած, և գետնին վրայ, վիրաւորուած ու շնչասպառ, տարածուած էր իւղճ Ռուզվէլը: Բոլոր նշաններէն այնպէս կ'երևար, թէ մեռած էր, ուսը ծակուած նիզակի մը ծայրով:

Ասպետը զարնուրեկի կակիծով մը բռնուած՝ ծունկի եկաւ վիրաւոր շան առջև: Այս դրութեան մէջ քարացածի պէս կը վնար, երբ ծանօթ ձայն մը զինքն սթափեցուց իր խորունկ վիշտէն, և վեր նայելով՝ իր քովը կեցած տեսաւ Էլ Հոփմը: Ծարտար բծիչը շանը մարմնէն հոնեց նիզակը, յետոյ, վէրքը կապելով՝ զայն իր վրանը փոխադրել սառւ ծառաներուն միջոցաւ:

— «Անասունը կ'աղէկնայ, սրբ ասպետ» —, ըսաւ բծիչը. — «հիմա խո՛ւր այն ըսէ, թէ ի՞նչ ունիս: Ինձի այնպէս կը թւի, թէ դուն մեծ վիշտ մը ունիս» —:

Սրբ Քրննէթը անոր ամէն բան պատմեց, և իմաստուն բծիչը զլուխը տարաւ բերաւ. — «Բեզի վտանգ



Դաւ զարաւանն պիտի մեկնիք. —, բառ բազումորք
42

կը սպասուհայ, որովհետև Ռիչարտը չը պիտի ներկէ Կ'ա-
դաշեմ, փախիլը այստեղէն մինչև որ իր բարկութիւնն
անցնի և գնա ծառայութեան մտիլ իմ տիրոջս՝ սուլ-
թանին քով» — :

— «Ես, քրիստոնեայ ասպետ մը, կ'ուզեա որ ան-
հաւատ մը դառնամ» — , հարցուց սրբ Քրննէթը զայ-
րացած :

— «Ի՞նչ քու կրօնդ կրնաս պահել» — պատասխա-
նեց թիչկը անտարբերութեամբ, — «և բնաւ պէտք
չունիս քու նորայրներուդ գէմ կուելու ։ Ընդհակա-
ռակը, փորձէ հաշտութեան կնքուիլ յաջողցնել, միջ-
նորդի դեր կատարելով սուլթանին և թագաւորին
միջև ։ Կր յիշես, թէ ինչ էին, քու ճգնաւորին Ներ-
կայացուցած խաղաղութեան գաշխնքին պայմանները» — :

— «Մէջ» — ըսաւ սրբ Քրննէթը :

— Քու յանձնած դաշնագրիդ մէջ բնաւ էր, թէ
փոխանակ քրիստոնեաներն ու մահմետականները «Կա-
ղեստինի տիրապետութեան մասին միճելու, աւելի լա-
ւրած պիտի ըլլային, եթէ զայն երկու հաւասար մասե-
րու բաժնէին ։ Ասկից զատ, խաղաղութիւնը տպահո-
վելու համար, Լէյտի էտիթը պէտք է Սուլթանին կնու-
թեան տալ ։ Այն էմիրը, որուն ճամբուն հանդիպեցար,
այս գործը սուլթանին համար յաջողցնելու կ'երթար
ճգնաւորին քարայրը ։ Այս առաջարկութեան մասին
Ռիչարտ թագաւորը ոչինչ չը գիտէր, բայց մտաջաճ բո-
ւոր իշխաններն ալ տեղեակ են այս խնդրին, և ամէնքն
ալ իրենց հաճութիւնը սուած են» — :

— «Հաճութիւն տա՞՞ծ են» — ազադակեց ասպե-
տը, — «անոնք համաձայնած են Լէյտի էտիթը Սուլ-
թանին ծախելու ։ Ս'հ, ասիկա սարսափելի է ։ Այս բա-
նը Ռիչարտ թագաւորը պէտք է որ այս վայրկեանիս
իմանայ» — : Եւ, յանկարծ թիչկը թողլով, ասպետը
նետի մը արագութեամբ Ռիչարտ թագաւորի վրանէն
ներս ինկաւ, գլուխը կախած ։

Թագաւորը սրբ Բըննէթէն լսելով անոր պահակի պաշտօնէն զաստիճիք եղած ըլլալը, զարհուրելի կերպով բարբոցաւ, մինչև իսկ ուզեց զայն տեղն ու տեղը մեռցնել: Իր կատաղութիւնը երբէք չը պակսեցաւ, երբ ասպետն իրեն յայտնեց, թէ թագաւորին հիւանդութեան միջոցին, քրիստոնեայ իշխանները դաւադրութիւն էին սարքած՝ Լէյտի էտիթը սուլթանին կնութեան տալու: Բարկութենէն խենդ դարձած, թագաւորն յայտարարեց, թէ աւելի կը նախընտրէր էտիթը անհաստի մը կինը դարձած տեսնել, քան թէ զաւանան Արովտայի մը, և զահիճը կանչելով, հրամայեց անոր սպաննել սրբ Բըննէթը, խոստովանանքէն անմիջապէս հաքը: Չինն ու պահակներն իսկոյն վրան յարձակելով, չղիճալի զարկած ասպետը նուազուցին վրանէն և դէպի կառափնատ տառչնորդեցին, ուր եկաւ նաեւ կուսակրօն մը խոստովանցնելու համար:

Լէյս իսկ միջոցին, թագուհին սթօթէն ընկճւած և սարսափահար, իր բրած ապուշ կատակին պատճառով, կը վազէր թագաւոր ամուսնին վրանը, կտ տոնել տալու համար սրբ Բըննէթի մահուան դատապարտութեան հրամանը: Բայց թագաւորը առաջին անգամին ըլլալով չէր ուզեր մտիկ ընել, և երբ Լէյտի էտիթն ալ միացաւ Պէրանմէր թագուհին նոյնն աղերսելով, ան ա՛լ աւելի զայրացաւ, քանի որ այսպէս կը հաստատէր թէ էտիթը կը սիրէր սրբ Բըննէթը:

— «Դուք արքունիքը պիտի ձգէք և ձեր կեանքը մենաստանի մը մէջ պիտի անցնէք» —, սյուսայ թագաւորը: — «Իսկ զայով ասպետին, ան պիտի մեռնի, այս է իմ վերջին խօսքս»:

Թագաւորը անդրդուելի կերպով կը յամառէր, և

սրբ Քրննէթն անպատճառ պիտի սպաննւէր, եթէ էլ
Հաքիմը միջնորդած չըլլար, և իբրև վարձք իր կատա-
րած բժշկութեանը, անկէ չը խնդրէր սրբ Քրննէթի
կեանքը :

Թագաւորը ասոր փոխարէն հագար գերի առա-
ջարկեց, բայց էլ Հաքիմը գլուխը շարժելով՝ կտրուկ
կերպով յայտնեց, թէ ինչ որ այ առաջարկէր իրեն,
պիտի մերժէր ամէնքն ալ . և թէ իր բազարձակ պա-
հանջն էր սրբ Քրննէթի կեանքը, Եւ երբ տեսաւ, թէ
թագաւորը շարունակ կը մերժէր, այսպէս ըսաւ .

— «Այն ատեն, ով հօր Ռիչարտ թագաւոր, քեզի,
որ «արդարադատ կ'անուանեն, ես պիտի բարձրաձայն
յայտարարեմ Եւրոպայի բոլոր երկիրներուն, աշխարհի
բոլոր ասպետներուն և բովանդակ ազնւական տիկի՛ննե-
րուն, թէ դուն ապերախտ և անգուժ թագաւոր մըն
ես» — :

— «Ի՛նչ, ապերախտ և անգուժ» — աղաղակեց
Ռիչարտը, — «աւելի լաւ կը համարէի, որ զիս մուրաց-
կան և անհուաա կոչէին: Ա՛ռ ուզածդ, բայց այնպիսի
տեղ մը տար այս սկովտացի դաւաճանը, որ աչքերս
զինչն այլեւս չը տեսնեն» — :

Էլ Հաքիմը մեկնեցաւ հետը տանելով դժբախտ սրբ
Քրննէթը, և թագաւորը ձեռնարկեց ընկու այն, ինչ որ
ամենէն առաջ իրած պիտի ըլլար: Ուզեց լաւ մը հաս-
կընալ, թէ ի՛նչպէս էր պատահեր դրօշակին խնդիրը:
Արքունի տիկի՛ններուն միջոցաւ ամէն բան մանրամասն
հասկցաւ թագուհիի իրած ապուշ կատակի մասին, և
վճռեց լաւ մը յանդիմանել զայն: Բայց թագուհին նե-
րած չէր թագաւորին, իր խնդրանքը մերժած լլլալը .
ուստի և այն վայրկեանէն քիթը կախեր էր, կուլար ու
նեղսիրտ էր դարձեր, և թագաւորը զայն յանդիմանելու
տեղ, ստիպուեցաւ մխիթարել և անկէ ներողութիւն

խնդրել : Գալով Լէյսի Էտիթին , ան ալ սակաւախօս էր դարձեր և ամէն մէկ խօսքին այնպիսի գոռոզ և խիստ շեշտ մը կ'ընկերացնէր , որ թագաւորը հասկցաւ . թէ իր արքայական անգականուհին կը նկատէր զինքը որովէս բռնակալ և մեծ յարգանքի անարժան միապետ մը :

Ուստի իր ուշադրութիւնը դարձուց այնպիսի մարդոց վրայ , որոնց խօսիլ , անգամ չէր սուր իր ներկայութեանը : Եւ սոմնէն առաջ անբաղղ Նէքթապան գառճաճն ու անոր կլինը աքսորեց իր քովէն , և իրրեւ ընծայ զրկեց սուլթանին , յետոյ աճապարանքով քրիստոնեայ իշխաններու խորհուրդին զիմեց , Աւստրիոյ արհիւրուքը , անգլիական զրօշակը գողնալու գործին մէջ ամբաստանելու համար : Իշխաններու խորհուրդն ալ արդէն բուռն փափաք մը ունէր Ռիարտի հետ հաշտուելու : Ասոնք յանձնառու եղան իրենց բոլոր միջոցները գործադրել՝ գողը գտնելու և պատժելու համար : Բայց արհիւրուքս իր պատին վրայ երդում լնելով՝ յայտնեց , թէ ինքը բնաւ յանցաւոր չէր :

Ռիչարտը իր մշտական մեծահոգութեամբ , սրտանց պիտի ուզէր քրիստոնեայ իշխաններու միջև պատիւ չր բերող կուէի մը առաջն առնել , բայց երբ լսեց , թէ ընդհանուր ցանկութիւն կար տեսական խաղաղութիւն մը կնքելու , բսաւ . — «Ո՛հ , իսկոյն Ալլահէտտինի վրայ քալինք , երբ ներկայ զինադադարի պայմանաժամը լրանայ , Ես ձեզի կ'առաջնորդեմ , և յետոյ , երբ յաղթանակը շահած է , ես ետ կը քաշելմ , ձեզի թողնելով փառքը » — :

Թագաւորին այս յայտարարութիւնը սրձագանգ գտաւ զինուորներու և ազքատ ինչպէսկիրներու սրտերուն մէջ , որոնց մէջ ան միշտ մեծ ժողովրդականութիւն մը վայելէր : Սակայն , երբ խորհրդասրահէն դուրս ելան , Տաճարականներու մեծ արարողակետը ըսաւ Ս'նսլրբայի մարքիզ Բօնրատին . —

— «Դուք լաւ չէիք կազմակերպած դրօշակին գողութեան գործը . հիմայ աշխատելու կարգն իմս է : Անցեայ գիշեր բանակէն ձերբակալուած և ինծի են բերած երիտասարդ թափառաշրջիկ մահմետական մը : Խենթ մըն է , և կ'լսէ ինչ Ռիչարտ թագաւորը սպաննելու է եկած : Յարմար վայրկեանին , պիտի կարգադրեմ զայն ազատ ձգելու , և , երբ իմանաք թէ Ռիչարտը մեռած է , պիտի հասկնաք թէ ես յաջողած եմ » — :

Ը. ԶՕՐԱՆՑՔ ՍԵ ԴՐՕՇԱԿԻՆ ԱՌՁԵՒ

Մինչ այս բաները կը կատարուէին , բժիշկ Էլ Լաքիմը , հտեւն ունենալով իր ծառաներուն խոււրը , բնտիր նժոյգի մը վրայ նստած՝ դէպի անապատը կը սուրար : Խեղճ սրբ Քըննէթը անոր կ'ընկերակցէր , և ուղտի մը վրայ , որ ճիշտ քովէն կը քալէր , ուռիւ խոշոր զամբիւզի մը մէջ , պառկած էր իր վիրաւոր որսկան շունը : Ամբողջ օրը անապատին մէջէն ճամրորդեցին , և վերջապէս հասան ակունքին քով , որ Անապատի Աղամանդ անունը կր կրէր . և ուր սըր Քըննէթը առաջին անգամ հանդիպած էր Սրլսորըմ անունով մահմետական ոսղմիկին : Հոս քիչ մը հանգիստ աւին և ճաշեցին : Էլ Լաքիմը նկատելով , որ ասպետը հիւանդագին երեւոյթ մը ունի , ոնոր կազդուրիչ դեղ մը տուաւ , որ թմբիր մը պատճառելով՝ յնացուց սրբ Քըննէթը : Երբ յունէն արթընցաւ , ինքզինքը ո՛չ թէ արմաւենիներուն տակ պառկած գտաւ , այլ նուրբ մետաքսէ հիւսուած գեղեցիկ վրանի մը տակ , և իսկոյն հասկցաւ , թէ կր գտնուէր սուլթանի բանակատեղիին մէջ : Իր քովը կեցած էր Էլ Լաքիմը , բայց ինչ էլ Լաքիմ : Ասիկա բժիշկին ձայնն ունէր , բայց մահմետական ռազմիկի տարագ էր հագած : Զարմացած ասպետի հարցումներուն , ան պատասխանեց .

—«Այո՛, ես եմ, էլ Հաքիմը, որ ձեր թագաւորն ստողջացուց. և ես նայնպէս այն Երլալորըմն եմ, որ ձեզի հետ կուեցաւ Մեռեալ ծովուն քով, և ես դեռ ուրիշ անուններ ալ ունիմ: Աս ինչո՞ւ չունենամ: Միթէ՞ դուք ինքներդ սւրիշ անուն մը չունիք, քան թէ ասպես սրբ Քրննէթը» — :

Այր Քրննէթը կարմրեցաւ, մանաւանդ երբ էլ Հաքիմը աւելցուց .

—«Ձեր գաղտնիքը եւ գիտէի, և ես գիտեմ նոյնպէս, թէ դուք կը սիրէք Լէյտի Էտիթը. զոր կը կարծեմ, թէ մեր սուլթանը իրեն կնութեան պիտի աւնէ: Բայց ես կը ցանկայի, որ դուք մաքրէիք ձեր պատիւը, և անպատուած չը մնայիք քրիստոնեաներուն աչքերուն առջեւ: Այս գործը զլուխ չը պիտի կրնաք հանել, մինչեւ որ չը գտնաք դրօշակը գողցողը, և զայն մենամարտի չը հրաւիրէք, Այնպէս կը խորհիմ, թէ այս պարագային ձեր որսկան Ռուզվէլը ձեզի կրնայ լաւ օգնել: Անոր հոտառութիւնը այնքան սուր է, որ իւր վրայ յարձակողը տեսնելուն պէս, իսկոյն անոր վրայ պիտի նետուի: Երբ Ռուզվէլը բոլորովին աղէկնայ, ես երկուքդ ալ այնպէս լաւ մը կերպտրանափոխ կ'ընեմ, որ ոչ ոք ձեզի չը ճանչնայ, և այս միջոցով ձեզի Խաչակիրներու բանակատեղին կը զրկեմ. բայց մէկ պայմանով մը յանձնառու կ'ըլլամ ըսածս իրագործելու. այն է, որ դուք ալ յանձն առնէք սուլթանին կողմէ Լէյտի Էտիթին նամակ մը տանելու» — :

Ասպիտան այս պայմանը ընդունեց: մտածելով թէ՛ —«Լէյտի Էտիթը արդէն իրմով այլեւս չի հետաքրքրուիր, քանի որ սնուպաւուրած ասպետ մըն է ինքը, և նոյնպէս անհաւատ սուլթանի մը հետ ալ չի ամուսնանար, հետեւաբար նամակը տանելով՝ գէշ գործ մը ըրած չը պիտի ըլլար» — :




Ռազակաւեղիէն արտօւած



Սյր Քրմնիքը, օճախապուրկ եղած, կը հեռանայ

Ինչպե՞ս կարող է լինել այդպիսի անբարեկամությունը:



նատարած մարդը, կամաց կամաց սողալով՝ միշտ վրասին կը մօտենար, Ուստի կասկած մը մտքէն անցնելով, պատրաստ կեցաւ, և, երբ մահմետականը յունկարծական ռստումով մը նետուեցաւ թագաւորին վրայ՝ դաշոյնը բարձրացուցած, Նուպիացին կայծակի արագութեամբ հասնելով՝ բռնեց մարդասպանին բազուկը, և սկսաւ կատաղի մաքառում մը երկուքին միջեւ: Թագաւորը ախտակով մը զինւած, Զախճախեց մարդասպանին գանկը: Յետոյ, նշմարելով որ դաշոյնը ծակած էր սոււամորթին կաշին, իր ամբողջ ուժովը սկսաւ անոր վէրքէն արիւնը դուրս ձծել, վախնալով թէ մի գուցէ զէնքը թունաւորուած ըլլար: Նուպիացին շատ աշխատեցաւ արգիլելու, սակայն չյաջողեցաւ, և թագաւորը անոր դպչելուն պէս, իսկոյն հասկցաւ, թէ ան Նուպիացի սոււամորթ մը չէր բնաւ: Եւ որովհետեւ արդէն շատ մը նշաններէ կասկածած էր, կռահեց իսկոյն, թէ իրեն բնծայ եկած համբ գիրին ուրիշ մէկը չէր, եթէ ոչ սըր Քրննէթը, ուստի և անոր ըսաւ.

— «Բարեկամս, դուն իմ կեանքս փրկեցիր: Ես կը ցանկայի, որ դուն ինծի համար այ աւելին ընէիր, գրտնելով Անգլիոյ դրօշակը գողցողը: Ահաւասիկ մագաղաթ մը, գրէ՛»:

Սըր Քրննէթը, առանց իր ինքնութիւնը մատնելու, աճապարեց գրել, որովհետեւ իմացեր էր, թէ իշխաններու Խորհուրդը, թագաւորին սիրտն ա՛լ աւելի առնելու համար, որոշած էր վաղուան օրը, Ս. Փէրրֆի բլուրին գագաթը ծածանեցնել դարձեալ Անգլիոյ դրօշակը, և անոր առջիւ զօրանցք մը կատարել տալ: Այսպէսով բոլոր իշխաններն ու զինուորները պիտի անցնէին դրօշակին առջիւէն՝ զայն ողջունելով: Ուստի Նուպիացին հետեւեալը գրեց մագաղաթին վրայ.

— «Թոյլ տւէք ինծի կենալ դրօշակին քով, և ես պիտի յաջողիմ գողը գտնելու:» —

Յաջորդ առտուն, ուրեմն, երբ Ռիչարտ թագաւորը, իր հղբայրը և բազմաթիւ ազնւականներ ըլլելին գագաթն նաւաբեցան՝ դրօշակին քով, Նուպիացին ալ ասոնց քովը կեցաւ, իր հրաշալի որսկան շանը կապէն բռնած : Ժամանակ առ ժամանակ թագաւորը ակնարկ մը կրննաէր շանը վրայ, երբ քրիստոնեայ պետերը շարք շարք կ'անցնէին : Եւ երբ անցնելու կարգը Աւրստրիոյ անհամակրելի արհիպուքսին եկաւ, թագաւորը անհանգիստ վիճակ մը ստացաւ : Բայց, նակաւակ սպասուածին, չունը բացարձակապէս հանդարտ կեցաւ, և թագաւորը յուսախար եղաւ, որովհետեւ զօրքի թափօրը գրեթէ անցած յմնացած էր, և դեռ դրօշակին գողը չէր գտնուած : Ինչ միայն մեծ-արարողապետն ու իր բարեկամ Քօնրատը կր մնային ետեւը :

Յանկարծ ապշեցուցիչ տեսարան մը սլարդեցաւ : Երբ Քօնրատ մարքիդը, վեհափառօրէն, չքեղ նապւած, ոսկիի և արծաթի մէջ շողշողալով, կը յատաճանար, չունը գայրօթի խուլ ունում մը արձակելով, կապը կարեց, ուժգին ոստում մը բրաւ, և մարքիդին կոչողէն՝ յոնելով՝ դայն իր ձիէն վար առաւ : Վայրկենապէս աղմուկ, փրթաւ, և Ռիչարտ թագաւորն աղաղակեց .

— «Մօնսէրրայի մարքիդ Քօնրատ, քեզ կ'ամբաստանեմ մասնութեան և դաւաճանութեան յանցանքներով» :

Քօնրատը իր յանցանքն ալ աւելի ծանրացուց՝ մէկէնիմէկ յայտարարելով .

— «Ես բնաւ դպած չեմ դրօշակին» — :

— «Եւ ես ալ այդ մասին բան մը չխօսեցայ» — , ըսաւ Ռիչարտը, — «ինչ որ դուն կը յայտնես, ատով խակինքդ կ'ապացուցանես, թէ խիղճդ հանդարտ չէ» :

Այս անգամ կռիւը այնքան ծանր էր, որ Ֆրանսայի խոհեմ Տիլիպ թագաւորն անգամ չկրցաւ խաղաղու-



[3]

Սըր Քրննէթի տունը վառ կը ձգէ մարտիպն իր ձիւն

Թիւնը վերահաստատել : Ուստի վճռեցին , որ հինգ օր յետոյ , գոց տեղ մը Քօնրատը մենամարտի Ռիչարտ թագաւորը փոխարինող ըմբիշի մը հետ : Թէեւ Ռիչարտ անձամբ կ'ուզէր կուել , սակայն իր ժողովուրդին համար անոր կեանքը շատ թանկագին ըլլալուն , չձգեցին որ վտանգի ենթարկուէր : Եւ խեղճ Ֆիլիպ Օկիւսթ թագաւորն ըսաւ .

— « Հիմա հարց է , թէ ո՞րտեղ պիտի կուին հոս , բոլոր զինուորներն ալ կուին մասնակցել կ'ուզեն » :

— « Այն ատեն , խնդրենք սուլթանէն , որ մեզի փոխ տայ իր բանակատեղին , երկու կողմէն ալ քանի մը ազնւականներ վկայ կ'ըլլան մենամարտին » — ըսաւ Ռիչարտը :

Վճռուեցաւ , որ Ռիչարտը Նուպիացիին միջոցաւ գլխի մը դրկէ սուլթանին :

Եւ երբ գիրը պատրաստուեցաւ , թագաւորը զայն Նուպիացիին յանձնելով , ըսաւ . — « Որովհետեւ ես պարտաւոր եմ նաեւ ըմբիշ մը ընտրել , այս դաւաճոն Քօնրատի հետ մենամարտելու համար , կր կարծեմ , թէ դուք սուլթանի բանակատեղիին մէջ քրիստոնեայ ուղղակի մը կրնաք գտնել , որ ուզէր իմ տեղս մենամարտի : Ով որ ալ ըլլայ յանձն առնողը , ես համաձայն եմ » :

Սրբ Քրննէթը իսկոյն հասկցաւ , թէ թագաւորը զինքը կր ճանչնար , և երախտագէտ նայածք մը նետեց անոր , սակայն այդ մասին յայտնութիւն մը չըրաւ , և թագաւորը շարունակեց :

— « Ի՞նչ սուլթանէն նամակ մը ունիս էտիթ իշխանուհիին յանձնելի : Կատարէ նաեւ այդ պարտքդ , և մի՛ մոռնար թէ դուն համր գերի մըն ես » :

Սրբ Քրննէթը խոնարհութիւն ընելով հեռացաւ , ըմբռնելով , թէ թագաւորը իր վերջին սպասելքով կ'արգիւէր իրեն էտիթի հետ խօսելու :

Բայց այս բանն իրեն սաստիկ ծանր եկաւ . երբ իշխանուհին առջեւ ծռնգի եկած՝ լսեց անոր տռաջին խօսքերը : Էտիթը տիրութեամբ անոր նայելէ յետոյ , ըսաւ .

— « Ես ճանչցայ ձեզ . թէ ձեզ և թէ որսկան չունը , երբ աչքիս զարկիք Ս . Գէորգի ըլուրին վրայ : Մ՛հ , թանկագին սյր Քրննէթ , ի՞նչ է այս կերպարանաւորութեան նպատակը » :

Դժբաղդ ասպետը յիշեց թէ թագաւորը այլեւս մեծ վատահուժիւն մը ունէր իր վրայ , ուստի չուզեց խոստումը դրժել այս անգամ ալ Էտիթի համար , և գոհացաւ աւելի դժբաղդ արտայայտութիւն մը ստնկով և գլուխը շարժելով :

— « Մ՛հ , քրիստոնեայ քաջ ասպետ , մոռցէք նախախնայն ու անպատուութիւնը , և խօսեցէք այն խեղճ կնոջն հետ , որ ձեր քովանդակ դժբաղդութեանը պատճառ դարձաւ — » , այսպէս կ'ըսէր Էտիթը ազաշական ձայնով մը : Իսկ երբ սյր Քրննէթը անխօս կը մնար , ձեռքերը կսկիծով տրորելով և ցոյց տալով անոր սուր թանին նամակը , իշխանուհին զայն ձեռքն առաւ , և բարկացած ձայնով մը հետեւեալ յանդիմանութիւնն ըրաւ .

« Այս ամենն կը տեսնեմ , որ իմ քաջ ասպետս ուրիշ բան չէ , եթէ ոչ Արեւելքի գերի մը , նատ աղէկ , կ'ուզեմ նամակը կարդալ » :

Նամակին ընթերցումը իր բարկութիւնն ալ աւելի սաստկացուց : Սարսափելի դժգոհացաւ սուրբանէն , որ գրած էր , և սյր Քրննէթէն , որ բերած էր . — « Կերպարձի՛ր տիրոջ քով , գորի » — , ազապակեց Էտիթը , և տեղեկացուր անոր թէ իշխանուհի Էտիթը ինչպէս էր վարւած իր նամակին հետ — : Այս ըսելով զայրագին նամակը ոտքերուն տակ նետեց , և գրեթէ վազելով դուրս եկաւ վրանէն :



Օ՛հ, սր Բընեք, առ ինչ կը նստուակ:

Արր Քրոնէթն ալ աւելի չ'վշտահար, վերադարձաւ թագաւորին քով, բայց Ռիչարտը անոր կսկիծը չնշմարեց, որովհետեւ ուրիշ այցելու մը ունէր: Ասիկա իր Պլոնտէլ բարեկամն էր, երաժիշտ բանաստեղծը, իր հաւատարիմ Պլոնտէլլու, որ, օր մը, գաած էր այն տեղը ուր Ռիչարտ թագաւորը իրո՞ղբեր վար դրած էր: Ռիչարտ, որ երաժշտութիւնը կը պաշտէր, խելակորոյս եղաւ զայն տեսնելով, և գուհանք ստիպուեցաւ իր ամենագեղեցիկ և ամենանոր երգերը երգել թագուհիին և անոր չքախումբի տիկիներուն սուջեւ: Յետոյ թագաւորն անձամբ տիկիներն առաջնորդեց իրենց վրանը, և ճամբան հարցոյց էտիթին, թէ սուլթանին ինչ պատասխան պիտի գրկէր:

— «Հսէք անսր» —, պատասխանեց իրոխտ էտիթը,
— «Թէ ես անհաւատի մը հետ չեմ ամուսնանար»:

— «Ինչո՞ք և այնպէս, խորհեցէք» —, բաց թագաւորը, — «որովհետեւ էնկատարի բարեպաշտ ճղնասրը, սատղերուն նայելով՝ գուշակած է, թէ ձեր ամուսնայքրիստոնեայ պիտի ըլլայ, և թէ ձեր ամուսնութիւնը զիս պիտի հաշտեցնէ հօր թշնամիի մը հետ: Արդ, աղէկ բան մը բրած կ'ըլլաք անհաւատի մը հետ ամուսնանալով, եթէ, այդ կերպով, կտրողանաք զայն քրիստոնեայ զարձնել, և վերջ մը զնեյ այս դժբաղդ պատերազմներուն»:

Բայց էտիթը, թագաւորին շտի հպարտ, մերժեց այս ձևով ինքզինքը դո՞ւարերել: — «Գոնէ սպասեցէք մինչեւ որ զինքը տեսնէք» — աւելցուց թագաւորը, — «որովհետեւ ես այնպէս կը կարծեմ, թէ ան շատ գեղեցիկ է: Թագուհին մենամարտին ներկայ ըլլալ կ'ուզէ, և, բնականաբար իրեն պիտի ընկերանան իր չքախումբի տիկիներն ալ, սպասեցէք ուրեմն մինչեւ ձեր ստիական աչքերով սուլթանը տեսնելը»:

Գրգռի կերպը բարձրագույնի մի քայլով շարժվելու



ուայնենք դիակը մեր աչքերուն առջևն . անոր յիշատակը հետու վանենք մեր մաքերէն» :

Բայց ասիկա դիւրին բան մը չէր . և ինձոյքի ամբողջ տեսողութեանը միակ քրիստոնեայ պետք . որ կասարեկապէս գո՛հ և ուրախ էր . Ռիչարդա իւզուտորն էր . որ ըստ զինքն հիւրասիրողին .

— «Ազնւասիրտ սուլթան . դուք կուտած էք Ակովտիոյ արքայազուն իշխանին հետ : Չէ՞ք ուզեր . հիմայ ինծի հետ ալ փորձել : Պայման դնենք . ոչ ո՛վ յաղիլէ . ան տէր դառնայ Երուսաղէմին» :

— «Ահոկէ աւելի լաւ բան մը չէի կրնայք պահպարտայ չեմ համարձակիր» — . սլաւասխանեց սուլթանն ու սուկցուց .

— «Մենամարտի Երուսաղէմի տիրապետութեան համար . ձիւղեղն պիտի բլլար հիմայ . որովհետեւ արդէն իմ տիրապետութեանս տակ է այն . ասկէ գտտ . թէ ինծի և ի՛նչ ձեզի համար սուրբ քաղաք մըն է : Ինքզայն երբէք չպիտի կրնայք գրաւել . որովհետեւ ձեր քրիստոնեայ իշխաններու միութիւնը քայքայած է : Իսկ մինակ ձեր անգլիական բանակով . բաւական ուժեղ չէք ինծի դէմ լատերագմելու : Ետե իմ բանակիս համար անհրաժեշտ է իմ ներկայութիւնս . եթէ մենամարտի մը մէջ ես իյնամ . արու զաւակ մը չունիմ . որ ինծի յաջորդէ : Սակայն այս պայմանով չկրնայ կատարելուս համար . ազնւասիրտ Ռիչարտ . յանձն կ'առնեի ձեզի տալ այն բոլորը . ինչ որ կը կամենաք» :

Երկու հօգօր վեհապետները . որ երբեմն կատարեցնամքին էին . իրարմ լաճնւեցան . սրդէս բարեկարգ . և յախտեան իրօր չտեսան :

Յաջորդ առտուն քրիստոնեայ իշխանները միման բանակատեղին . և քիչ փերջը կարիք իշխանաժողովուրդաւ Ակովտիոյ արքայազուն կանչն :

գինու ուրներ, հրաշալի կերպով սպառապելնուած, և անըման սրբարական նժոյզներու վրայ նստած :

Յանկարձ հեծեղագօրքը ճեղքուեցաւ, և սուլթանը մէջէն անցաւ : Ան ճեփ ճերմակ էր հագուած, և մէջքը փաթկած էր մետաքսէ բոսորագոյն գօտի մը : Իր ամբողջ սղառապելնուածը կը բաղկանար կոր ոսկեպօծ սուրէ մը, որ ետեղանու կը կոչէի : Քայք կը կրէր երեք զարդեր, մէկը իր գլխու փաթկնոյթն վրայ, երկրորդը՝ մտանդիկն, և երրորդն ալ՝ սուրի կոթին, հասնօրէն ասոնցմէ խրուքանչիւրը տեղի կ'արժէր, քան Ռիչարտի բոլոր գոհարեղէնները :

Վեհափառօրէն, սակայն խանդաղատ, սուլթանը Ռիչարտին մտեմնալով, բարի պալուստ մտղթեց, և զայն առաջնորդեց յատկապէս իրեն համար պատրաստուած փառասոր վրանը : Իսկ թագաւորն ու չքախուսմբի ակիկներն ալ դէպի իրենց յատկացուած վրանն ուղղուեցան : Երբ տիկիները կ'անցնէին, սկսած սուլթանէն մինչև բանակի վերջի՝ փնտրել, բայց ալ աչքերը գետին խորհեցուցի՞ն որովհետև մահամետականները երեսը բռնով նայիլը անքաղաքամբութիւն կը սեպէին :

Վրանին տակ, սուլթանը հետաքրքրութիւնով զննեց իր արքայազուն հիւրը : Մտնաւորապէս իր բուն հետաքրքրութիւնը չարժած էին Ռիչարտի յաղթանդամ սրունքներն ու բազուկները, ինչպէս նաև անոր սոյանդակ խոշոր սուրը : ասիկա գչրձածելու համար անհրաժեշտ էր երկու ձեռքով բռնել :

— «Չեմ կարծեր որ մէկ մարդ մը կարենայ գործածել այսքան ծանր սուր մը» — բաւ Սալահատինը : — «չատ կը փափաքէի տեսնել թէ թագաւորը վա՛յն ինչպէս կը գործածէ» :

— «Հաճոյքով» —, պատասխանեց Ռիչարտը, և շուրջը նայած միջոցին տեսաւ մատակ մէկ, որու կոթն ու

գլուխը երկաթէ կին : Չայն դրաւ փայտի կոճղի մը վրայ , քանի մը քոչլ ետ գնաց , սուրբ անգամ մը ստորացուց զլիսուն շուրջը , և , զարհուրելի հարւածով մը , երկաթեայ ձողը երկու մասի բաժնեց :

Սուլթանը չափազանց գովեց Միչարտի եարտարութիւնը , և սլը Թօմաս ինքնիրեն մըմնջեց .

— «Այո՛ , դուք չպիտի կրնայիք միևնոյն ընել» :

Եւ կարճէս ի՞նչ սուլթանն հասկնալով սրը Թօմասի միտքը , ըսաւ .

— «Այդեօք աշխարհիս վրայ կա՛յ բան մը , որ ազնիւ Միչարտ թագաւորն անկարող է ընել» :

Այս լսելով , գետինը կեցուց մետաքսեայ բարձ մը և հարցուց , — «Նոզայր , կրնա՞ս Իսիկա քու սուրովդ երկուքի բաժնել» :

— «Մնակահարսար ո՛չ» — , պատասխանեց Միչարտը , — «Ոչ մէկ սուր ... յնար կիսել : Չկ հարւածով , սլքան կակուղ առարկայ մը» :

Սուլթանը ժպտեցաւ , և իր կրք եախադանը քաշելով , առաջացաւ ու անոր բերանը թեթև կերպով քսեց բարձին , որ երկու մասի բաժնուեցաւ :

Թագաւորը զարմանքէն աղաղակեց , և սրը Թօմասը յայտարարեց , թէ գործին մէջ կախարդութիւն կար : Սնտեմն սուլթանը մետաքսէ թաշկինակը դէպի վեր նետեց , և եաթաղանով զայն սլ երկու մասի բաժնեց :

— «Նոզայր» — , ըսաւ մեծահոգի թագաւոր , «Եթէ ես բան մը բրի , զոր դո՛ւ չէիր կրնար ընել , դուն ալ փոխողարձարսար կատարեցիր այն , ինչ որ ես ինքս չպիտի գլուխ հանէի : Հրմայ , զանք ուրիշ խնդրի մը , կրնայի՞ սրդեօք քու ինձի՛ բժշկելու համար զրկած ըլլալ : Եւ ճաքիմը՛ , անմնկ և շուքնակալութիւնս յայտնէ :

Սուլթանը նշան մը ըրաւ , և հոն գտնուող գետի մը

Uaar qurubwähylar dlyz paqwar arphā nābhgawā turawar arphādhg



Քահոյն իրեն բերաւ սե ուլիկի մորթէն շինւած սրածայր գտակ մը, ճիշտ էլ Հաքիմի ծածկածին պէս : Ակլան, առինը գայն իր ճերմակ փաթիթոցին սեղոր դրաւ, և, նոյն վայրկեանին, խաղաւորը բոբոնեց, թէ սուլթանն ու բժիշկը միևնոյն անձն էր :

— Աւերեմն դո՛ւն էիր իմ վրանս եկողը, դո՛ւն գիտաւ ուղջացուցիր. դո՛ւն ինձմէ խնդրեցիր Սրբ Քրննէթի ազատութիւնը —, ըսաւ խաղաւորը դարմացած : Բայց գիտես որ միևնոյն ասպետը կր սիրէ Լէյաի Էտիթը, որուն հետ դուն ամուսնանալ կ'ուզես :

— «Ազէկ գիտեմ այդ» —, պատասխանեց մեծահոգի սուլթանը. — ես գիտեմ նոյնպէս, ինչ ալ իշխանուհին կր սիրէ ասպետը, և ո՛չ ինչ գիտէ Այդպէս է ճակատագիրը : Ես ասպետին բարեկամն եմ, և ձեռքէս եկ ձր պիտի լնեմ, վազումն մնտամարտին համար գայն լաւ մը սպասազինեցու : Բայց, ներք ինձի, իմբուկի ձաշն կ'ուտնեմ, նշան է ինչ Քոնրասար իր հեանորդներով կր ժամանէ : Ընչա է որ ես բնաւ չեմ սիրեր ոչ այդ սարմարքիդը և ոչ ալ իր բարեկամ մեծ-արարողապետը, սակայն և այնպէս այսօրուսն օրս անոնք իմ հիւրերս են, և ես պարտաւոր եմ անոնց բարի գալուստ մաղթելու » :

— Այր թո՞մա՛ս, ըսաւ խաղաւորը, կրք սուլթանը նկնած էր, տեսա՞ք մեր բմբիշը, արդեօք պահանուսածին պէս սպասազինեա՞ծ էր :

— «Այո՛» —, պատասխանեց Սրբ թո՞մասը, և ես ցատիկ զարմացալ, տեսնելով որ այս բմբիշը Սրբ Նննէթն էր : Սուլթաննին սուսած հրաշալի զրաններուն լակ դէմքն այնքան էր փոխւեր, որ առանց իր որսկան լուզվելին, որ ուրախ ցատկոտելով վրաս վազեց, գինը չպիտի ճանչնայի » :

— « Անոր ըսէք իմ կողմէս » —, աւելցուց խաղաւ-

աւելցուց դառնալով դէպի մեծ-արարողապետին կողմը .
— «դողացէ՛ք» — :

— «Մտղա՛յ, Ես այդ բանն ընել չպիտի կրնամ՝ եթէ նոյն իսկ ուզեմ» — , ըսաւ գոռոզ հեղնութեամբ մը մեծ-արարողապետը : — «եւ» — , շարունակեց ինքնիրեն , — «Եթէ մարքիզը չյսգիթէ , կը յուսամ թէ Սկովսիացին անոր գործը ազէկ մը պիտի լինցնէ : Ան բնաւ չպիտի խոստովանի , քանի զեռ ես կրնամ զինքն արգիլել» :

Երբ լրատուներու ձայներն յայտարարեցին , թէ խորհրդատու որ ըմբիշը սրբ Քրննէթն էր , Անգլիացիներու կողմէ գորդապին ծափահարութիւն մը լսեցաւ : Քանի մը վայրկեան երկու աւազակները կրցան իրարու դէմ մաքառիլ , որովհետեւ երկուքն ալ սքանչելի ձիափարողներ և կտրիճ գինւորականներ էին : Բայց յանկարծ Քոնրատին ուժերը պակսեցան , և սրբ Քրննէթը նիզակի ուժգին հարած մը աւաւ անոր : Մարքիզը գետին տապալեցաւ , կուրծքը բաց : Երբ լրատուները Քոնրատի սաղաւարտը կը վերցնէին , ան կը մրմնջէր .


— «Ի՛նչ կ'ուզէք : Ձիս յանցաւոր են հոչակած և իրաւ ալ յանցաւոր եմ : Ի՛նձի խոստովանանայր մը տէ՛ք» — :

Թիչարտ աղաչեց սուլթանին , իր թալիսմանին միջոցաւ Քոնրատի կեանքն ազատել : Սուլթանը յանձն առաւ , յրտութեամբ ըսելով , — «Թող զայն վրանս բերին» — :

— «Մ՛չ» — , միջամտեց մեծ-արարողապետը :

— «Ես կ'ուզեմ չոր ան իմ վրանս փոխադրուի . սուլթանը հոն կրնայ գալ խնամելու համար» :

— «Մի՛ հակառակիր , իմ բարի Սէլահէտտինս , չատէ՛ղաչեմ քեզի» — , ըսաւ Թիչարտը : — «Եւ հիմայ շարունակենք մեր ընելիքը : Անգլիոյ գինւորներ , զարկէք թմբուկները , մինչդեռ մենք յաղթականը կը տանինք



Քրիստոսի սպանութիւնը

մեր թագուհին առջև, որպեսզի իր շնորհաւորութիւններն րնէ» — :

Թագուհի յիշեալին մէջ համակ ուրախութիւն էր և մաղթանքներ: Յաղթական սուպետը ծունկի եկաւ, սուփորութեան համաձայն, թագուհին քակեց սնոր կոչիկներու խթանները: Էտիթը, աստիճանով երկրորդն ըլլալով, սաղաւարտը քակեց: Եւ երբ սրբ Քրիստոսի ապուսական զէմքը բացւած էր, թագաւորն բաւ ինդալէն պուսակալով:

— «Գիտէ՞ք, թէ ո՞վ է այս սուպետը... Անիկա որ մը թագաւոր պիտի բլայ, որովհետեւ իր խակական անուր Դաւիթ է, Ակովտիոյ արքայագուն իշխանը: Անուասիկ այն գաղանիքը, զոր ինք խոստովանած է ճգնաւորին: Այս վերջինը չէ ուղամ գաղանիքն ինծի յայտնել, իսկ ինչք, սուպետը, իր շափազանց հոգրտութիւնէն մզած, նոյնպէս այդ մասին ինծի բաւ մը չէ յայտնած»:

«Այն սասն, Ձեր վեհափառութիւնը ինչպէս իմացաւ» —, հարցուցին տիկիները:

— «Արտօնակ» —, ինդալով պատասխանեց թագաւորը. — «Անգլիայէն տեղեկութիւններ առի, որոնց մէջ ինծի կ'իմացնէին, թէ Ակովտիոյ արքայագուն իշխանը առանց իր թագաւոր հօր թողաւութեանը, կը ծառայէր իմ դրօշակիս տակ: Եւ նաև այն, թէ Ակովտիոյ Աւիլիւմ թագաւորը, երբ այս բանն իմացեր է, կակիծէն խենթ դարձած՝ ձեռքն ինկած Եւգլիայիները սկսեր է ձերբակալել ու վար գնել, որպէս պատանդ, մինչև իր գտնելն վերադարձը: Եւ այս գիտն բրբ այն վարկեանին, երբ իմ նուպիացի գերբիս վերջը կը ծծէի: Նշմարեցի, որ անոր մարմինն մորթը քակուելն սե չէր, այլ սե ներկւած, և ասոր կցելով ուղի: զխոտոյթիւններ, ճշմարտութիւնը գուշակեցի: Եւ այժմ Էտիթ, եղբորս աղջիկը, տէք ձեր ձեռքը ձեր սիրամ իշխանին»:

դարձրոյցով, բայց պատրաստակամ ստեղծագործական խնամքով: — «Իսկ ես կը կարծէի, թէ սուլթանին հետ պիտի տամուսնանայի, զայն քրիստոնեայ դարձնէի և վերջ տայի այս պատերազմին»:

— «Ճշնաս որի տեսիլքը ճիշտ էր» —, բաւ թագաւորը. — «Բայց այն իշխանը, որու հետ դուք պիտի ամուսնանայ, արդէն քրիստոնեայ է, և ձեր ամուսնութեամբ վերջ գտնուող պատերազմն ալ, Անգլիոյ և Սկոտլանդի միջև եղած պատերազմն է: Երկար խօսելու պէտք չկայ, գեղեցիկ եզրօրսովիկս, դուք պէտք է որ իշխանին հետ ամուսնանայ, ուղէք շուղէք: Իսկ հիմա յիշեցէք, որ սուլթանն իր ազնուական հիւրերը խնճոյքի է հրաւիրած, որ տեղի պիտի ունենայ այսօր ցերեկին, բանակատեղիին մէջտեղը, սե մեծ վրանին սակր»:

ԺԱ. ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչարտի ակնարկած սե վրանը զարդարած էր իմանկագին գորգերով, մետաքսեայ հանգստաւէտ բարձերով, զով բմպելիներով, համադամ և նրբաճաշակ կերակուրներով, ոսկեայ և արծաթեայ սպասներով, և ուրիշ ամէն տեսակ շքեղութեամբ ու ճոխութեամբ, ինչ որ սուլթանի մը հիւրասիրութիւնը կրնար բնծայել:

Վրանին մէջտեղը Սէլահատինը ոտքի կեցած, իր հրաւիրեալներուն կը ստասէր, երբ յանկարծ սուսնայ խոյտու իմին ինդրելու, նեքթապան զաճաճը, վրանէն ներս ինկաւ: Կարծես անոր աչքերը կողմերէն դուրս կ'իյնային, սարսափէն բռնած, խօսելու տեղ անկապ բառեր կ'արտասանէր. — «Ա՛հ, լսէ ինձի, ահաւոր սուլթան, կը սպառաշուք...» —:



Դառնա՛նք իրար կ'անցնի.

Սուլթանը, որ երբէք չէր մերժեր լսել անիրաւու-
թեան ու սնարդարութեան գոհերուն, սիրտ տուա գա-
ճաճին, որ ինքզինքին գայ և բացէ ի բաց խօսի սրտին
մէջ ունեցածը: Սակայն այս բանն անկարելի եղաւ, և
այլևս մամանակ չունեցաւ անով զբաղելու, որովհետև
արդէն խմբուկները կը յայտարարէին Նիւրբրուն գայր:
Շնորհալի բարեկրթութեամբ մը, Սէլահետաինը կ'ընդու-
նէր յորիստոնեայ իշխանները: Մասնաւոր պատկառանքով
մը կ'ըսէր Սկովտիոյ արքայագուն իշխանին:

— «Թէպէտե քնձի համար հաւասարապէս թան-
կագին պիտի եղած բլլայիք, եթէ դուք արքայագու-
նի մը տեղ, որը Քրննէթ հասարակ սասպան բլլայիք,
որ անպեայնեքը քնձի հետ կուէի բռնու եցաւ այս մօտերը:
Որովհետև ես կը սիրեմ կտրիճ և մեծաճոցի զինւորա-
կանը ու կ'ախնածիմ, ինչ որ ալ ըլլայ սնոր ծագումը»:

Այս զեղեցիկ ճառէն յետոյ, սուլթանը պաղե-
ցուած ոչարակի մեծ գաւաթով մը, խմեց իր Նիւրբրու
կենտոյց: Սկովտիոյ իշխանէն յետոյ Ա. սարիոյ արհիղուք-
սը խմեց և գաւաթն իրաւցուց մեծ սրտալողապետին:
Այս իսկ վայրկեանին, սուլթանը նշուն մը բրտա և գա-
ճաճը սրտագութեամբ մօտեցաւ բարձրաձայն բսելով:

— «Բանեցէ՛ք այս մարդը»:

Մեծ-արարողապետը դողաց, բայց և իսկոյն ինք-
զինքը բռնելով, գաւաթը վերցուց խմելու: Բայց նոսի-
քան խմելը, սուլթանին թեթև ետխաղանք չողաց ոգին
մէջ, և վար իջնալով մեծ-արարողապետին գլուխը տե-
ղէն թոցուց, որ պորբելով մինչև վրանի միւս ծայրն
ինկաւ:

Այս պատահարին զէմ ընդհանուր ազատակ մը
բարձրացաւ. ամէնքն ալ կը կարծէին, թէ դաւաղբու-
թեան ծուղակն են ինկած: Աւսարիոյ արհիղուքսը
ոստում մը բրաւ դէպի ետ, խորհելով, թէ անկէ յետոյ
կարգն իրեն պիտի գար:

Բայց սույթանք հանդարտ ձայնով մը բուռ .

— «Ազնուասիրտ Սիչարտ . և դու քիմ պատական հիւրերս . հոս բնաւ . դատադրութիւն կայ . Եթէ այս մարդը իմ գաւաթովս պուտ մը գինի խմած ըլլար . մեր հիւրասիրտ թեան րովանդակ որչնքնիրով . ես չպիտի համարձակէի այլեւս անոր ուրիշ վնաս մը հասցնել . բայց և այնպէս անոր միտնիր արդար հատուցում մըն էր . Գեռքիչ առաջ անիկա սպաննած էր իր մարտկամ Քոնրատը . զոր ես իր վրանին տակ քնսուցած էի . գործածելով թախամանք . որ պիտի բռնէր գոյն :

— «Աս անկարելի է» — . կազազակէին . անուր բարեկամներ էին :

— «Մտեցիր . գաճաճ . և պատմէ տեսածդ» — . հրամայեց սույթանք :

Այն ասին գաճաճը պատմեց . թէ ինչպէս հետաքրքրութենէն մզած . կամայ մը մտած էր այն վրանին մեջ . ուր Մարքիզը կը քնանար . բայց սոսքի ձայնիւր ստնելով՝ քաշուած պահած էր վարագոյրի մը կտուր . շոնկէ . տեսած էր մեծ-արարողապետին ներս մանկն ու Քոնրատը արթնցնելը :

— «Ի՞նչ կ'ուզէք» — հարցուցած էր Մարքիզը :

— «Ես եկած եմ ձեզի խոստովանցնելու» — . բռած էր մեծ-արարողապետը . և յիսոյ շարունակած . — «Առէ՛ք ստիկա» — . այնպիսի ձեւով մը . որ կարծես տաճր հաղորդութիւն էր . և . խօսելով հանդերձ . գաշտնը կոխեր էր անոր սիրտը :

— «Ահաւասիկ . թէ ի՞նչ էր պատմած ինձի գաճաճը» — . յայտարարեց սույթանք :

— «Ի՞նչ անձամբ կրնաք տեսնել Մարքիզին դիակը՝ Գալով մեծ-արարողապետին . զիտէք արդէն . թէ անոր վրայ ինչ ազդեցութիւն բրին . — «Ինչպէ՛ք այս մարդը» խօսքերը : Աւելի չարժեք խօսիլ անոր մասին . շե-

զատանոնք Ալլահնէտաինի վրայ միևնոյն վատահու թիւեր շունէին, ինչ որ թագաւորն ունէր :


Վերջապէս հասան բլուրի մը գագաթն որ կ'իշխէր մահմետականներու շրանակոտեղիին վրայ, և այստեղէն սքանչելի տեսարան մը բացուեցաւ սնունդ նայուածքին առջև :

Հարիւրաւոր ու հազարաւոր մետաքսէ վրաններ կը տարածէին ամէն կողմ, և ասոնց շուրջը կը նշմարէին բազմաթիւ ձիեր ու մարդիկ : Երբ բանակէն նշմարեցի՝ Ռիչարտի փոքրաթիւ պահակազօրքը, նոյն վայրկեանին թմրուկներն ու ծնծղաները գարնեեցան, որպէս նշան բարի գալուստի : Ասոր հետ մկտեղ, բազմաթիւ շուծ չազօրքեր վայրկենապէս իրենց նժոյգներուն վրայ ցատկած՝ արարաւ ընդառաջ եկան, նետերու տարափնե թափելով քրիստոնեաներու զուիներէն վեր, օդին մէջ Տիկիններն ալ տուիլի սարսափեցան, և մանաւանդ, երբ նեա մը դպաւ թագուհիին նստած պատգարակին, անկա սոսկումի ազաղակ մը արձակեց : Ռիչարտը, պայրացած, սուրը քաշելու վրայ էր, երբ էտիթը պատգարակէն զէպի դուրս կախուելով, բաւ անոր :

— Տէր արքայ, զգո՛յ : Տեսէ՛ք, այս նետերուն ծայրերդ գիտմամբ կոտրուած են, սուլթանը մեզի դինտորական ձեռով մի միայն բարի գալուստ կը մտադիտէ, որովհետեւ դուք ինքնիրդ ալ ռազմիկթագաւ որ մըն էք» :

— «Իսկապէս, իրաւունք ունիք» —, բաւ թագաւորը . . . «Ի հարկէ, բացատրու թիւնդ ճիշտ է, յառաջ, զինուորներ, դուք ձեզ լաւ պահեցէք, և ընաւ վախ մի՛ արտայայտէք» :

Այս վայրկեանին նեաերու տարափը դողբեցաւ, և ռազմիկներն իրենց ձիերը կեցուցին՝ նիզակները ձեռքերուն մէջ խաղցնելով : Այն ստեն, Ռիչարտ թագաւ



Մ. ԹԻԻԼՍԻԱՆ ԲԱՆՈՒԿԱՏԻՂԻՆ ՎԲՈՆԵՆԻՅԻ ԵՆՈՒՐԱՆ ԸՐ ԿՐ ՆԵՐԿԱՅԱԿՆԷՐ

Եւ սուղթան Սէլահէտահներ, որ չափազանց խոր սիրով
մը կը սիրէր, իր դժբաղդութեանց մէջ միշտ պաշտպա-
նած, ծայտեալ տապեալ, ինչպէս նաեւ կը յարգէր անոր
քաջասիրտ կիներ, որու ղէպի արքայազուն իշխանն ունե-
ցած սիրոյն վկայ էր, հարանիքին առթիւ անոնց զրկեց
թանկագին հմայուսկը (թաղիաման), որու շնորհիւ ինքն
այնքան հաճախ որ ընկուծիւններ էր կատարած :

